Ազգ
Azg
1 ՅՈՒՆԻՍ 2012 ՈՒՐԲԱԹ 98(4950)
ISSN: 1829-1651

# Սպառնում են ահաբեկել ՀՀ նախագահին

«Այնպես որ, Սե՛րժ Սարգսյան, համարեք, որ զգուշացված եք»,- այս սպառնալիքով է իր հրապարակումը եզրափակել Aze.az-ը: Մինչ այդ ահաբեկչական լրատվամիջոցը, վկայակոչելով ինքնությունը հրապարակել չցանկացած՝ «Ադրբեջանի ՊՆ բարձրաստիճան ներկայացուցչին», սպառնացել է, որ «բացառությամբ Քելբաջար-Ջանգելան հատվածի, որ Ադրբեջանի սահմանապահ զորքերը ժամանակավորապես չեն վերահսկում, Ադրբեջանի ողջ օդային տարածքը վերահսկվում է ՀՕՊ ուժերի կողմից, որոնք սահմանախախտի հետ, զգուշացնում ենք, կվարվեն ճիշտ այնպես, ինչպես եթե ինչ-որ ավտոմեքենա խախտելու լիներ Ադրբեջանի սահմանապահ ուժերի կողմից վերահսկվող հայ-ադրբեջանական սահմանի մի հատվածը, ասենք՝ Ղազախի կամ Թուզի շրջանում եւ չենթարկվեր կանգնելու կամ հեռանալու մասին սահմանապահների հրամանին: Վստահեցնում ենք, այդ մեքենայի եւ ուղեւորների բախտը չէր բերի: Նույնը ճակատագիրն է սպասում նաեւ սահմանախախտ օդանավի ուղեւորներին: Պետության ղեկավարի ներկայությունն օդանավում չի կարող ծառայել եւ չի ծառայելու որպես սահմանախախտ օդանավի դեմ այն գործողությունների «իմունիտետ», որոնք կձեռնարկվեն՝ պաշտպանելու Ադրբեջանի սուվերեն օդային տարածքը»:

Ո՞վ է այս ելուզակային ձեւակերպումների հեղինակը, ինչպես ասացինք, մնում է անհայտ: Ըստ երեւույթին, ադրբեջանցի «բարձրաստիճան զինվորականը» պարզապես վախեցել է հրապարակել իր անունը: Այն պարզ պատճառով, որ քաղաքացիական օդանավ կործանելու սպառնալիք հնչեցնողը նույն պահին հավասարվում է ահաբեկչի: Այդ հայտարարությունների պատասխանը ժամանակ առաջ տվել է ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատար **Մովսես Հակոբյանը**՝ զգուշացնելով, որ Արցախի ՀՕՊ ուժերն օրվա մեջ ադրբեջանական տասնյակ քաղաքացիական ինքնաթիռներ են ուղեկցում:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի «սուվերեն օդային տարածքին», ապա, ի գիտություն այդ երկրի ՊՆ «բարձրաստիճան ներկայացուցչի», այն ոչ թե «Քելբաջար- Ջանգելան հատվածից է սկսվում», այլ այնտեղից, որտեղ զորքերի շփման գիծն է: Իսկ Ստեփանակերտ թռիչք իրականացնող օդանավը նշված հատվածը չի «խախտելու»: Իսկ եթե ադրբեջանական ՀՕՊ ուժերը պատրաստվում են քաղաքացիական օդանավ խփել ԼՂՀ օդային տարածքում, դա արդեն այլ խոսակցության թեմա է: Դա սովորական ահաբեկչության սպառնալիք է: Իսկ ահաբեկիչներին միշտ էլ համարժեք պատասխան տրվում է: Մանավանդ որ սպառնալիքի հասցեատեր է ընտրված Հայաստանի նախագահը: Հետաքրքրական է, օդային ո՞ր միջանցքով է Բաքվից Նախիջեւան թռել Իլհամ Ալիեւը:

Վ. Ա.

# «Ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մահանում»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




«Ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մահանում», ասաց նորընտիր Ազգային ժողովի նորընտիր նախագահ Հովիկ Աբրահամյանը՝ ընտրվելուց հետո նախագահության իր աթոռին նստելիս, ու այդ խոսքով բազմաթիվ ենթադրությունների դուռ բացելով: Երեկ 5-րդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստն էր, որն ընտրեց ԱԺ ղեկավարություն: Եթե ուշադիր դիտարկենք երեկ Ազգային ժողովում տեղի ունեցած ողջ իրադարձությունները, այնտեղ ենթատեքստերով ասված խոսքերն իսկապես շատ էին, եւ մեկը մյուսին կապողն ու վերլուծողը շատ եզրահանգումների կարող է գալ: Ներկա չէին ոչ միայն ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը», այլեւ զարմանալիորեն կառուցողական ընդդիմություն դարձած «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահը, նա, այդպիսով, չլսեց նախագահ Սարգսյանի եւ նոր ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի ելույթները: Բայց ԲՀԿ-ական Նաիրա Զոհրաբյանի խոսքով՝ այստեղ պետք չէ փնտրել քաղաքական ենթատեքստ, երեւի գործեր է ունեցել:

Պահպանվեց նոր խորհրդարանի առաջին նիստի հանդիսակարգը. նիստը վարում էր տարիքով ավագ ՀՀԿ-ական Մկրտիչ Մինասյանը, հնչեց երկրի օրհներգը, երկրի նախագահը մի բազմաշերտ ուղերձ ընթերցեց, Ամենայն հայոց կաթողիկոսը ողկեղենիկ, բայց պատգամավորների մեծ մասի համար անհասկանալի հայերենով աղոթք, օրհնանք ու մաղթանք հղեց:

«Իմ ցանկությունն այն է, որ աշխատենք այնպես, որ ոչ ոք չզղջա իր ընտրության համար եւ որպեսզի արդարացնենք բոլորի հույսերը», ասաց նախագահ Սարգսյանը: Նա նշեց, որ այս խորհրդարանում ամբիոն ունեն քաղաքական դաշտի հիմնական ազդեցիկ ուժերը, այդ առումով ակտիվ խորհրդարան է, շնորհավորեց նաեւ ՀԱԿ-ի մուտքը խորհրդարան. «Չեմ կարծում, թե որեւէ լուրջ գաղափար կամ միտք, որը կծնվի մեր հասարակության որեւէ հատվածում, ցանկության եւ անհրաժեշտության դեպքում չգտնի դեպի Ազգային Ժողովի ամբիոն տանող ճանապարհը...

Տես էջ 3

# Գործի են անցնում Ֆրանսիայի թուրքամետ շրջանակները

Ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության, ուրացումը քրեականացնող նոր օրինագիծ պատրաստելու առնչությամբ նախագահ Ֆրանսուա Օլանդի հայտարարությունները անհանգստություն են պատճառել Ֆրանսիայի թուրքամետ շրջանակներին: Սրանց մեջ առանձնակի ակտիվությամբ աչքի է ընկնում «Պատմության ազատություն» կազմակերպությունը Պիեռ Նորայի գլխավորությամբ: Դրա ապացույցը կազմակերպությունից արված հայտարարություններն են:

Նախքան հայտարարություններին անդրադառնալը նշենք, որ «Պատմության ազատություն» կազմակերպության կենտրոնակայանը Փարիզում է, աշխարհի տարբեր երկրներում ունի շուրջ 3 հազար անդամ: Նշելով այդ մասին՝ թուրքական «Հաբերլեր» կայքէջը մայիսի 30-ին նշել է, որ ցեղասպանությունների ուրացումը քրեականացնող օրինագծի հնարավոր մուտքը Ֆրանսիայի Ազգային ժողովի օրակարգ խիստ մտահոգել է կազմակերպության անդամներին:

Այդ ընթացքում «Պատմության ազատություն» կազմակերպության նախագահ Նորան ասել է, որ հունիսի 2-ին Փարիզում նախատեսվող ամենամյա հերթական խորհրդաժողովն ամբողջությամբ նվիրված կլինի Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող օրինագծին, եւ այդ հարցը որպես օրակարգի միակ խնդիր մանրամասն կքննարկվի: Նորայի վկայությամբ՝ կազմակերպությանը մտահոգում է օրինագծի այնպիսի տեքստի պատրաստումը, որին Սահմանադրական հանձնաժողովը ի վիճակի չլինի հակադրվել:

Հ. Զ.

# Վարչապետ Էրդողանը՝ Հայաստանի «միջուկային ծրագրի» մասին

Ատոմային էներգիայի թուրքական կազմակերպությունում վարչապետ Էրդողանը ատոմակայանների անվտանգության խնդիրները պարզաբանելուց հետո անցել է Հայաստանի եւ Իսրայելի միջուկային (զենքի առումով) ոլորտներում ծավալած աշխատանքներին: Ինչպես մայիսի 30-ի համարում նշում է «Միլիեթը», Էրդողանն ասել է, որ միջազգային հանրությունը, անտեսելով միջուկային ոլորտում Հայաստանի եւ Իսրայելի ջանքերը, կասկածամտությամբ է վերաբերվում Իրանի ծրագրերին, եւ ավելացրել է. «Դա անարդարացի է եւ անիրավացի»:

# Ֆաբիուսը նույն երգն է երգում

Մայիսի 30-ին «Մոնդում» հրապարակված հարցազրույցում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ֆաբիուսն ասել է, որ Չիկագոյում՝ ՆԱՏՕ-ի գագաթաժողովի շրջանակներում արդյունավետ հանդիպում է ունեցել նախագահ Գյուլի հետ: Նա Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող նոր օրինագծի առնչությամբ Ֆրանսիայի նախագահ Օլանդի խոստումներին առնչվող հարցին ի պատասխան ասել է. «Այդ հարցում անհրաժեշտ կլինի հաշվի առնել Սահմանադրական խորհրդի որոշումը: Թեեւ Օլանդը խոսք է տվել, սակայն կան իրավական դժվարություններ»:

Հ. Զ.

# Կառավարությունը ներկայացրեց իր հրաժարականը

**Կառավարության երեկվա նիստը սկսվեց վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթով: Նա ընթերցեց մեր երկրի սահմանադրության 55-րդ հոդվածի պահանջը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: «Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետը եւ հաշվի առնելով, որ 2012 թ. մայիսի 31-ին գումարվել է Հայաստանի Հանրապետության նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստը, ես հանրապետության նախագահին եմ ներկայացրել կառավարության հրաժարականը: Միեւնույն ժամանակ մենք ձեզ հետ միասին պարտավոր ենք շարունակել կատարել մեր պարտականությունները մինչեւ նոր կառավարության կազմավորումը», նշեց Տիգրան Սարգսյանը:**

Ա. Մ.

# Ադրբեջանն է պատասխանատու ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը խոչընդոտելու համար

Արցախի մայիսյան եռատոնի կապակցությամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունին եւ ԱԽ անդամ երկրներին է տրամադրվել ԼՂՀ ԱԳՆ հայտարարությունը, որը որպես ՄԱԿ-ի ԳԱ եւ ԱԽ փաստաթղթեր պաշտոնապես կտարածվի հաջորդ շաբաթվա ընթացքում, այսինքն՝ վստահաբար կարելի է սպասել ադրբեջանական հերթական «մեկնաբանությանը»:

ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցչությունից տեղեկացնում են, որ հայտարարությունում մասնավորապես նշվում է. «Մայիսի 9 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) ժողովրդի համար եռակի տոն է: Այդ օրը Արցախի ժողովուրդը մյուս ազգերի հետ միասին նշում է ազգային միասնության, հաշտության եւ ազատության տոնը՝ Երկրորդ աշխարհամարտի ավարտի կապակցությամբ»:

Հայտարարությունը հիշեցնում է Արցախում ծնված 3 մարշալների, 1 ծովակալի, 24 գեներալների, ԽՍՀՄ 28 հերոսների, Փառքի շքանշանի 7 ասպետների եւ բազում բարձրաստիճան սպաների մասին:

«Մայիսի 9-ին Արցախի ժողովուրդը միաժամանակ նշում է Շուշիի ազատագրման 20-ամյակը», ասվում է հայտարարությամբ, հավելմամբ, որ Շուշին 18-19-րդ դարերում ձեւավորվել եւ զարգացել է որպես հայության մշակութային եւ հոգեւոր գլխավոր կենտրոններից մեկը, որ 20-րդ դարի սկզբին ավերվել ու հրի է մատնվել քարտեզի վրա որպես պետություն առաջին անգամ հայտնված Ադրբեջանի զինված միավորումների կողմից: «Շուշին, որ գտնվում է ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի կողքին հառնող բարձունքում, 1990-ականների սկզբին դարձավ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի, մասնավորապես Արցախի մայրաքաղաքի ավերիչ գնդակոծության համար գլխավոր բազաներից մեկը», որ, սակայն, 1992 թ. մայիսի 9-ին ազատագրվեց, իսկ ազատագրմանը հաջորդած գործողություններով արցախահայությունը բացեց Հայաստանի հետ կապի միջանցքը, որը հայտնի դարձավ որպես «կյանքի ճանապարհ»:

«Մայիսի 9 խորհրդանշում է միաժամանակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման տարեդարձը, Արցախի ժողովրդի՝ սեփական պատիվը, անվտանգությունն ու ազատությունը պաշտպանելու կամքը», ՄԱԿ-ին տեղեկացնում է Արցախի արտաքին գերատեսչությունը, անդրադառնալով նաեւ այդ ամենի նկատմամբ Ադրբեջանի վերաբերմունքին: Ըստ այդմ, «Զավեշտալի է հաղթանակի օրվան նվիրված ռազմական շքերթի նկատմամբ Ադրբեջանի անհանգստությունն ու բողոքը. մի երկրի, որը ԼՂՀ ժողովրդի՝ ինքնորոշման իրավունքի իրականացմանը պատասխանեց Ղարաբաղի հարակից տարածքներում եւ բուն Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների քաղաքականությամբ, սանձազերծեց լայնածավալ ռազմական ագրեսիա՝ հայտնի միջազգային ահաբեկչական ցանցերի, հազարավոր վարձկան-գրոհայինների ներգրավմամբ:

Տես էջ 2

# Դոկտ. Նուպար Պերպերեան կը պարգեւատրուի ՀՀ նախագահի «Մովսէս Խորենացի» շքանշանով

Բոստոն: Մայիսի 22-ին կատարուեցաւ Հայոց Ժառանգութեան այգիի բացման պաշտօնական արարողութիւնը, ներկայութեամբ Մեսեչուսեց նահանգի հայ թէ ամերիկացի ընտրանիին՝ կառավարիչ Դիվալ Փաթրիքի, Բոստոնի քաղաքապետ Թոմ Մընինոյի, կոնգրեսական Էդուըրդ Մարքի, ինչպէս նաեւ՝ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան, որ կը բաղկանար արտաքին գործոց նախարար Էդվարդ Նալբանդեանէ, Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանէ ու ՀՀ Ուաշինգթընի մօտ դեսպան Թաթուլ Մարգարեանէ:



Այս ձեռնարկէն օր մը առաջ, կազմակերպուած էր ընթրիք, մասնակցութեամբ աւելի քան չորս հարիւր հրաւիրեալներու: Այս առթիւ Հայաստանի Հանրապետութիւնը պարգեւատրեց Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանէն երեք ազգայիններ իրենց բազմամեայ նուիրական ազգային ծառայութեան համար. այսպէս՝ ընկեր դոկտ. Նուպար Պերպերեան՝ Թէքէեան մշակութային միութենէն, դոկտ. Հրանդ Մարգարեան՝ Համազգայինէն եւ Ջէյմս Գալուստեան՝ Բոստոնի Ժառանգութեան այգիի հիմնարկի գլխաւոր պատասխանատու:

Ընկեր Նուպար Պերպերեան ծնած է Գահիրէ: 1944-ին ստացած է իրաւագիտութեան վկայական եւ որպէս փաստաբան անցած է եգիպտական ազգային դատարանները: Իրաւագիտութեան դոկտորայի շրջանը յաջողութեամբ աւարտելէ ետք, 1947-ին Փարիզի համալսարանի մէջ ներկայացուցած է իր աւարտաճառը՝ «Ապահովութեան խորհուրդը - անոր հիմնական տարբերութիւնները ազգերու ընկերակցութեան խորհուրդէն»:

1941-ին եղած է օգնական խմբագիր Գահիրէի ՌԱԿ «Արեւ» թերթի, Վահան Թէքէեանի խմբագրապետութեան շրջանին: Աւելի ուշ եղած է վարիչ քարտուղար ՌԱԿ-ի Կեդրոնական վարչութեան, որուն ատենապետն էր Միհրան Տամատեան: 1947-ին ստանձնած է Փարիզի «Ապագայ» երկլեզու թերթի խմբագրութիւնը եւ 1947-1958 տարիներուն՝ Գահիրէի «Արեւ» օրաթերթի, 1958-1960-ին՝ Ֆրեզնոյի «Նոր օր» եռօրեայի, իսկ 1961-1982-ին՝ Բոստոնի «Պայքար» օրաթերթի խմբագրապետութիւնը:

Վարած է ՌԱԿ վաստակաւորներու հիմնադրամին ատենապետութիւնը եւ հիմնադիր անդամներէն է եղած ԹՄՄ-ի Միացեալ Նահանգներու եւ Կանադայի Կեդրոնական վարչութեան, որուն ատենադպիրն է ներկայիս:

Վաթսուն տարիներու ծառայութիւն մը ունի ռամկավար ազատական մամուլին մէջ, ինչպէս նաեւ ՌԱԿ-ի ղեկավարութենէն ներս:

Գրած է շուրջ տասը հազար խմբագրականներ ու յօդուածներ, հեղինակ է հարիւրաւոր նորավէպերու եւ տասնեակ մը թատերախաղերու՝ Բիւրակն գրչանունով:

Կը շնորհաւորենք վաստակաշատ մեր ընկերը:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

***Խմբ. կողմից -** Շնորհավորելով սփյուռքահայ վաստակավոր հրապարակախոսին պետական բարձր շքանշանի արժանանալու առթիվ, հիշեցնենք, որ վերջերս, ապրիլի 22-ին, Կալիֆոռնիայում, ռամկավար եւս երկու գործիչներ արժանացել էին բարձր պարգեւի, այս անգամ Հայ եկեղեցու գերագույն պետի՝ Ամենայն հայոց հայրապետի սրբատառ կոնդակին եւ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանին՝ իրենց բազմամյա կրթական գործունեության համար: Երկուսն էլ՝ ՀԲԸ Միության Մանուկյան-Դեմիրճյան վարժարանի ուսուցիչներ՝ Լոռա Գույումճյանը եւ Մինաս Գոճայանը, ձեռամբ Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի:*

# Հայապահպանության խնդիրը բրազիլահայ համայնքում

Շուրջ 30 հազար անդամ ունեցող Բրազիլիայի հայկական գաղութը կանգնած է հայապահպանության դժվար խնդրի առջեւ: Գաղութի մեծամասնությունը հայախոս չէ, օրինակ՝ Սան Պաուլո քաղաքում գործում է հայկական միայն մի դպրոց՝ Հայ Ազգային Դուրյան վարժարանը, որը 90-100 աշակերտ ունի:

Հայ աշակերտների սակավությունը կախված չէ միայն ծառացած կրթական ու նյութական խնդիրներից: «Նաեւ կան տեխնիկական խնդիրներ, որոնց լուծումը մեր ձեռքում չէ», երեկ «Նոյյան տապան» մամուլի սրահում լրագրողներին հայտնեց ՌԱԿ գործիչ **Օշին Լեւոն Մոսդիչյանը**՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի Բրազիլիայի տեղական մարմնի ատենապետը:

Հայկական դպրոցները նաեւ պետք է համապատասխանեն Բրազիլիայի կրթական համակարգի պահանջներին, իսկ տեխնիկական հարցերից պարոն Մոսդիչյանն առանձնացնում է քաղաքի հոծ բնակչության մեջ ամեն օր հայկական դպրոց հասնելու դժվարությունը: Սան Պաուլոն 17 միլիոն բնակչություն ունի, քաղաքի տարբեր ծայրերից հայկական դպրոց հասնելը բոլորի համար դյուրին չէ:

Անկախ դժվարություններից՝ Հայ Ազգային Դուրյան վարժարանն արդեն 90 տարի գոյություն ունի, ու ժամանակին այնպիսի հեղինակություն է վայելել, որ անգամ բրազիլիացիները նախընտրել են իրենց երեխաներին այնտեղ կրթության տալ:

Միքայել Ջանյանը հենց այս վարժարանն է ավարտել, հայապահպանության հարցերից նա էլ առանձնացրեց խառնամուսնությունները, որոնք համայնքում մեծամասնություն են կազմում:

Բրազիլիայում հայերի արդեն 5-րդ սերունդն է ձեւավորվում, առաջին հայն այնտեղ գաղթել է 1880-ականներին, իսկ հայերի ամենամեծ խումբը գաղթեց 1926 թվին:

Ըստ պարոն Մոսդիչյանի՝ Սան Պաուլոյում հայերի հիմնական զբաղմունքը կոշկակարությունն է, չնայած արդեն ճարտարապետ, բժիշկ եւ այլ մասնագետներ պատրաստվում են:

Բրազիլահայ համայնքը «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով նաեւ մասնակցում է Հայաստանին աջակցելու ծրագրերին, եւ հիմնադրամի Բրազիլիայի տեղական մարմնի գանձապահ Էդուարդո Մեկբեկյանի խոսքով. «Եթե մեր ներքին ծախսերը չլինեին, ապա Հայաստանին ավելի շատ գումար կուղարկեինք»:

Ի. Պ.

# Սոս Պետրոսյան կրտսերը հաղթել է իլյուզիոնիստների մրցույթում

Մայիսի վերջին Հռոմում կայացած իլյուզիոնիստների միջազգային մրցույթում հաղթող է ճանաչվել 15-ամյա Սոս Պետրոսյան կրտսերը:

Երեւանի կրկեսի գեղարվեստական ղեկավար Սոս Պետրոսյանի փոխանցմամբ՝ մասնակիցներն ընտրվել են 6 ամսվա ընթացքում, եւ առաջին անգամ մրցույթին մասնակից է եղել Հայաստանից: Սոս Պետրոսյան կրտսերը կրկեսի գեղարվեստական ղեկավարի թոռնիկն է:

Ընդհանուր թվով՝ մրցույթին մասնակցել են 3 հազար իլյուզիոնիստներ ավելի քան 60 երկրից, իսկ ժյուրիի կազմում եղել են համաշխարհային հեղինակություն վայելող իլյուզիոնիստներ: Եզրափակիչ փուլում մրցել են 10 երկրների մասնակիցները, նրանք եղել են Ճապոնիայից, Միացյալ Նահանգներից, Չինաստանից եւ այլն: Եվ նրանց միջից հաղթողի տիտղոսը վերցրել է Սոս Պետրոսյան կրտսերը:

Ի. Պ.

ԲԱՔՈՒ-ԹԵՀՐԱՆ

# Իրան-Նախիջեւան «փակ» սահմանն ու թավրիզյան հրճվանքը

Նախիջեւանը, որ ոճրագործության առումով հետեւողական հանցագործությամբ ու նախագծով հայաթափվեց, հայազրկվեց, անգամ հայկական մշակութային ներկայությունից գրեթե «մաքրվեց», ներկայիս ընդհանրությամբ պարտադրված Ադրբեջանի հետ ցամաքային կապ ունի միայն Իրանի տարածքով: Ու թեեւ այս հանգամանքը, մասնագետների ու ականատեսների գնահատմամբ, Նախիջեւանում տիրող բռնապետական պայմանների ու հակաժողովրդավարական իրավիճակի հետ առանձնակի կապ չունի, բայցեւ հաճախ է շահարկվում Իրան-Ադրբեջան հարաբերություններում:

Հերթական անգամ նախիջեւանյան թեման դարձել է ադրբեջանա-իրանական առանց այդ էլ ոչ բարվոք հարաբերությունների վատթարացման թեմա եւ ոչ այնքան տարածվող տեղեկությունների իսկության ու իրականությանը համապատասխանելու առումով, որքան այդ լուրերին տրվող արձագանքների գրեթե թշնամական նոտաների համատեքստում:

Իրան-Նախիջեւան սահմանի փակ լինելու մասին լուրերը երեկ ադրբեջանական մամուլում տարատեսակ մեկնաբանությունների առիթ էին տվել, ընդ որում, տեղեկության առաջնային աղբյուր էր նշվում իրանական ազգային հեռուստառադիոընկերությունը՝ թեհրանյան ռադիոյի հետ: Համաձայն այդ տեղեկատվության, իրանական ռադիոները տեղեկացրել են այդ լուրի մասին, բայց էականը հենց սահմանի փակ-բաց լինելը չէ, այլ այն, որ ադրբեջանական կողմում իրանական մամուլի հրապարակումներում «ոգեւորություն» են նկատել:

Ստացվում է, որ Իրանում ուրախ են Նախիջեւան-Ադրբեջան սահմանի փակ լինելու առնչությամբ: Ավելին, ադրբեջանական կողմում հատուկ ընդգծում են, թե Թավրիզի բնակչությունն է «հրճվել» այդ տեղեկությունն իմանալով: Ու մինչ տեղեկությունը որեւէ կերպ ոչ հաստատվում էր, ոչ էլ հերքվում, ակնհայտ էր, որ առնվազն Թավրիզում հակաադրբեջանական տրամադրությունները մտահոգության տեղիք են տալիս Ադրբեջանում, թեեւ ադրբեջանական իշխանությունները առանձնակի ոչինչ կարծես չեն ձեռնարկում դրանց ուղղվածությունը փոփոխելու համար:

Երեկ արդեն ավելի ուշ Ադրբեջանի պետական սահմանային ծառայությունը կարճ ու ոչ հստակ հաղորդագրություն տարածեց, թե սահմանի փակման մասին «տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը»:

Ա. Հ.

# Ադրբեջանն է պատասխանատու ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության...

1-ին էջից

Ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի ագրեսիայի հետեւանքով առ այսօր օկուպացիայի տակ են գտնվում ԼՂՀ առանձին տարածքներ, իսկ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում գրեթե ամեն օր կազմակերպվում են սադրանքներ եւ դիվերսիոն գործողություններ»:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է, որ Ադրբեջանի Հանրապետությունն է պատասխանատու Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը՝ ի սկզբանե որդեգրած ուժային քաղաքականությամբ զինված հակամարտության վերածելու եւ այդ քաղաքականության շարունակությամբ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը խոչընդոտելու համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը կոչ է անում միջազգային հանրությանը՝ համարժեք արձագանք տալ ՄԱԿ-ի կանոնադրության եւ Հելսինկյան եզրափակիչ ակտի նպատակներին եւ սկզբունքներին հակասող Ադրբեջանի վարքագծին՝ կանխելու համար տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող հնարավոր ադրբեջանական նոր արկածախնդրությունը»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Պաշտպանենք Թեղուտը» ՀԿ-ի հայտարարությունը

**«Պաշտպանենք Թեղուտը» սոցիալ-տնտեսական բնապահպանական ՀԿ-ն հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ նշվում է՝ «Պաշտպանենք Թեղուտը» կազմակերպությունը որեւէ առնչություն չունի «Թեղուտի հանքի պաշտպաններ» կազմակերպության հետ:**

**Հիշեցնենք, որ մայիսի 30-ին ինտերնետային լրատվամիջոցներում տարածվել էր տեղեկատվություն, ըստ որի՝ «Թեղուտի հանքի պաշտպաններ» ՀԿ-ն տարածել էր հայտարարություն, որով դատապարտել էր Թեհմինե Ենոքյանի «Բնության հաշվեհարդար» ֆիլմը՝ նշելով, որ ֆիլմում տեղ են գտել հերյուրանքներ: Ըստ լրատվամիջոցներում գրված տեղեկատվության՝ «Թեղուտի հանքի պաշտպաններ» կազմակերպության ներկայացուցիչները ֆիլմի ստեղծողներին կոչ են արել ներողություն խնդրել լոռեցի երիտասարդներից:**

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Կգա նաեւ արվածի մասին խոսելու ժամանակը

***Երեկ 5-րդ գումարման Ազգային ժողովը հրավիրեց առաջին նիստը: Մի շարք պատգամավորների համար սա նաեւ օրենսդիր գործունեության առաջին օրն էր: Նրանց շարքում է ՀՅԴ համամասնական ցուցակով ընտրված պատգամավոր, «Գրանդ Քենդի» ընկերության նախկին տնօրեն Արմեն Բաբայանը: Լրագրողները խնդրեցին պատգամավորին պատասխանել մի քանի հարցի:***

**- Պարոն Բաբայան, ինչո՞ւ որոշեցիք առաջադրվել:**

- Դուք գիտեք, որ նախորդ գումարման ԱԺ-ում ՀՅԴ խմբակցությունում ընդգրկված էր «Գրանդ Քենդի» ընկերության սեփականատեր Կարեն Վարդանյանը: Այս անգամ պարոն Վարդանյանը որոշեց չառաջադրվել, քանի որ, որպես խոշոր գործարար, նա ունի բազմաթիվ ծրագրեր` կապված արտադրության ընդլայնման ու նոր աշխատատեղերի ստեղծման հետ: Բայց հաշվի առնելով, որ Կարեն Վարդանյանը բազմաթիվ ծրագրեր ուներ նաեւ օրենսդիր դաշտում, որոշվեց, որ ես առաջադրվեմ որպես պատգամավորի թեկնածու եւ, ընտրվելու դեպքում, փորձեմ իրականացնել այդ ծրագրերը:



**- Օրենսդրական գործունեության ո՞ր ոլորտի մասին է խոսքը եւ որո՞նք են լինելու ձեր գործունեության առաջնահերթությունները:**

- Ես իմ աշխատանքը պատկերացնում եմ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում: Հույս ունեմ, որ երկրի ամենախոշոր արտադրական ընկերության տնօրենի պաշտոնում իմ երկարամյա աշխատանքային փորձը ինձ կօգնի խորհրդարանում աշխատել ի նպաստ տեղական արտադրության եւ հայրենի տնտեսության զարգացման: Սա է լինելու իմ գործունեության առաջնահերթությունը:

**- Ինչպե՞ս կմեկնաբանեք, որ ՀՅԴ ցուցակի երկու անդամների ինքնաբացարկի արդյունքում դուք տեղ ստացաք ԱԺ-ում:**

- Կարծում եմ, դա ես չպետք է մեկնաբանեմ: Դա եղել է ՀՅԴ կուսակցության որոշումը: Իմ կարծիքով, կուսակցությունն այդ որոշումը կայացրեց` առաջնահերթությունը տալով երկրի առաջ ծառացած տնտեսական խնդիրների լուծմանը` նաեւ օրենսդրական դաշտում: Եվ ես ամենայն պատասխանատվությամբ պատրաստ եմ իմ գիտելիքներով ու տարիների կուտակած փորձով միանալ իմ գործընկերներին` մասնավորապես Արծվիկ Մինասյանին, եւ ակտիվորեն մասնակցել տնտեսական խնդիրների կարգավորմանն ուղղված օրենսդրական գործունեությանը:

**- Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր աշխատանքը ընդդիմադիր խմբակցության կազմում:**

- Անկախ այն բանից` ընդդիմադիր, թե իշխանական դաշտում, յուրաքանչյուր պատգամավորի գերխնդիրը պետք է լինի աշխատել ի նպաստ երկրի բարօրության ու առաջընթացի եւ պետության ու քաղաքացիների շահերի:

**- Որոշե՞լ եք , թե որն է լինելու ձեր առաջին նախաձեռնությունը:**

- Քանի որ այսօր իմ պատգամավորական գործունեության առաջին օրն է, չեմ ուզում ժամանակից առաջ անցնել ու խոսել ապագա ծրագրերի մասին:

Եթե մի փոքր ժամանակ տաք աշխատելու, հավաստացնում եմ, որ կգա նաեւ արվածի մասին խոսելու ժամանակը:

# Ինչպե՞ս եղավ, որ «որոշեցի» կորցնել անձնագիրս

- Վա՜յ, տիկին Քնքուշ, նո՞ր եք գնել, շա՜տ գեղեցիկ է:

- Սազում է, չէ՞:

Խորհրդարանական ընտրությունների մոտենալը ոչինչ այդքան ստույգ չէր հաստատի, որքան հարեւանուհուս նոր, կարմիր բլուզը: Նկատել եմ` ընտրությունից ընտրություն տիկին Քնքուշը մեծ ոգեւորությամբ թարմացնում է իր զգեստապահարանը` նախանձի պոռթկումներ առաջացնելով մեր թաղամասի մյուս կանանց մեջ, ովքեր չեն հասցնում իրենց օգտին ծառայեցնել մեր երկրում կատարվող քաղաքական կարեւոր իրադարձությունները:

Անկեղծորեն նշեմ` այս անգամ հարեւանուհիս չափն անցավ. նա թաղամասի միակ մարդն էր, ում հաջողվեց միանգամից երկու կուսակցությունից 10.000 դրամ «թռցնել»:

Պատկերացնո՞ւմ եք մյուս բնակիչների վիճակը, երբ իմացան տիկին Քնքուշի այդ մեծ ձեռքբերման մասին. «Դե մենք բախտ չունենք», անցնում էր նրանց մտքով:

Օբյեկտիվ լինելու համար սկսեմ մորիցս: Մայրս սկսեց անձնագրիս որսը, ընտրություններին նախորդող շաբաթ: Բոլորին ծանոթ եղանակով մեր դուռն էլ թակել էր պատգամավորական թեկնածուին «շատ լավ ճանաչող» մեկն ու 10.000 դրամ առաջարկել ընտրական ձայնի ու անձնագրերը հավաքագրելու դիմաց:

Ես եւ ավագ քույրս, քաղաքացիական հասարակություն ստեղծելու ծանր բեռը ուսերիս առած, որոշել էինք շրջիկ քարոզիչներից եւ ոչ մեկին չտրամադրել մեր անձնագրերը:

Չգիտեմ, երեւի նրանցից էր, որ առաջին անգամ էի գնալու ընտրության ու որոշել էի լիարժեքորեն զգալ որոշում կայացնողի վիճակը: Ամեն դեպքում, եղանակը գտա. անձնագիրս կորել է: Մի քանի օր մայրս տունը տակնուվրա արեց. «Վա՞տ կլինի, որ քեզ նոր տաբատ գնես»... «Ընտրության հնարավորություն չունեմ, չեմ տալու ու վերջ, ինձ էդ 10.000-ը պետք չէ», հակառակվում էի ես:

Իհարկե ստում էի. 10.000-ը այն գումարը չէր, որ ինձ նեղություն կտար. 10.000 դրամ. շրջանից մայրաքաղաք եկող ուսանողիս 10 օրվա ճանապարհածախս, մաշված կոշիկները նորով փոխելու, հավանած զգեստը գնելու հնարավորություն: Ամեն դեպքում, մեր ընտանիքում հայտարարվեց, որ ես` 20-ամյա անկախ երկրիս անկախ քաղաքացին, կորցրել եմ անձնագիրս ու այլեւս անձեռնմխելի եմ յուրաքանչյուր թեկնածուի համար:

Կարծում էի, թե հաղթանակ եմ տարել մի բանի նկատմամբ: Արդյոք այդ «բանն» ինձ ճանաչում, հաշվի առնո՞ւմ է, գիտի՞, թե ինչ «արժեմ»... անցավ կարճ ժամանակ ու զգացի «փոքրությունս». խորհրդարանական ընտրություններին նախորդող օրերն էին:

Վերադառնում եմ տուն, ու առաջինը, որ աչքիս է զարնում, մորս ճնշված հայացքն էր. գուշակում էի` ինչ էր եղել, այն, ինչ եղել էր նաեւ նախորդ ընտրություններից առաջ. խոստացված գումարը անձնագրի սերիաների դիմաց տեղ չէր հասել կամ էլ ճանապարհին «վթարի» էր ենթարկվել:

Մեկ րոպեում փուլ էին եկել մորս` 10.000 դրամի շուրջը կառուցված նպատակներն ու պլանները, կոմունալ վարձերը գոնե մի փոքր թեթեւացնելու հնարավորությունը:

Ընտրությունները անցան, գնացին: Տիկին Քնքուշն իր բլուզը հավաքում է լվացքի պարանից, ու ես հիշում եմ անձնագիրս:

Կատակը` կատակ, բայց անձնագիրս իրոք չեմ գտնում:

ՆԵԼԼԻ ՄԱՐԳՍՅԱՆ

# Վարդան Վարդանյանի ու Տիգրան Սարգսյանի փոխադարձ շնորհակալությունները

Քաղաքաշինության նախարար, ԲՀԿ անդամ Վարդան Վարդանյանը, հաշվի առնելով, որ կառավարությունն արդեն հրաժարական է տվել եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն էլ քաղաքական որոշում է կայացրել մաս կազմելու կոալիցիային, երեկ շնորհակալություն հայտնեց կառավարության իր բոլոր գործընկերներին հինգ տարվա համատեղ աշխատանքի համար: Վարչապետ Տիգրան Սարգսյանն, ի պատասխան, նույնպես շնորհակալություն հայտնեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության գործընկերներին, ովքեր անցած 5 տարիների ընթացքում «կառավարության ծանր լուծը» տարել են իրենց ուսերի վրա:

Ա. Ս.

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏ

# «Ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մահանում»

*1-ին էջից*

**Այո, կլինեն բանավեճեր, միգուցե երբեմն նաեւ սուր, կլինեն համաձայնություններ տարբեր հարցերի շուրջը կամ յուրաքանչյուրը կմնա իր կարծիքին, կհասկանաք իրար, երբեմն` ոչ: Էականն այն նպատակներն են, հանուն որոնց մենք մտնում ենք քաղաքական բանավեճի դաշտ: Էական են նաեւ միջոցները, որոնք մենք ընտրում ենք նպատակներին հասնելու ճանապարհին: Իշխանության տարբեր, այդ թվում եւ խորհրդարանական լծակներին տիրապետելն, օրինակ, միջոց է բոլորիս համար կարեւոր նպատակներին` Հայաստանի հզորացմանը, մեր ժողովրդի կենսամակարդակի կտրուկ ավելացմանը, արտագաղթի կասեցմանը, մեր երկրի պաշտպանունակության բարձրացմանը եւ մյուս նպատակներին հասնելու ճանապարհին: Երբ միջոցները դառնում են ինքնանպատակ, կամ որ ավելի վատ է, երբ իրական նպատակները դառնում են միջոցներ, իսկ միջոցները` նպատակներ, խաթարվում է քաղաքական բանավեճի տրամաբանությունը, կորում է իմաստը», խոսք հասկացրեց նախագահը նրանց, ում ուզում էր հասկացնել, նշելով, որ սխալ միջոցներով ձեռք բերված նույնիսկ ամենալավ նպատակը ի վերջո ոչ մի լավ բանի չի հանգեցնի. «Մենք շատ բան ունենք սովորելու, ցավոք, հենց մեր սխալներից, եւ ուզում եմ հուսալ, որ ապագայում ավելի քիչ սխալներ կանենք»:**

**«Մաղթում ենք, որ միշտ արթուն ու արծարծ լինեն ձեր հոգում հավատքն առ Աստված, սերը մեր հայրենիքի ու ժողովրդի հանդեպ եւ լավատեսությունը աշխարհասփյուռ ազգիս լուսավոր գալիքի», մաղթեց Ամենայն հայոց կաթողիկոսը եւ Տերունական աղոթքից հետո Պահպանիչ աղոթքով օրհնելով հինգերորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորներին:**

**Հետաքրքրական է, որ նիստը վարող Մկրտիչ Մինասյանի` պատգամավորներին երդվեցնելու ջանքը ավարտվեց նրանով, որ համարյա անլսելի մնաց (համենայն դեպս` վերեւում գտնվող լրագրողներիս համար) պատգամավորների ընդհանրական «Երդվում ենք»-ը:**

**Տեղի ունեցավ ԱԺ նախագահի ընտրություն, ՀՀԿ-ի կողմից Գալուստ Սահակյանի առաջադրած թեկնածուն` Հովիկ Աբրահամյանն իր խոսքում ասաց. «Ասել, որ մեծ հպարտություն ու լուրջ պատասխանատվություն եմ համարում նման խորհրդարանի ղեկավարի պաշտոնին առաջադրվելը, նշանակում է քիչ բան ասել: Ես լավ պատկերացնում եմ` ինչպիսի դերակատարություն է վերապահվելու Ազգային ժողովի նախագահին եւ հաստատապես պատրաստ եմ դրան»: Աբրահամյանն ասում էր, որ որպես իշխող եւ կառավարություն ձեւավորող քաղաքական ուժի ներկայացուցիչ` կառավարության վրա ազդելու ներկուսակցական հարթություն ունի, եւ չի վարանելու անբավարար արդյունավետությամբ լուծվող հարցերում որպես ԱԺ նախագահ լինելու կառավարության քննադատը. «Միեւնույն ժամանակ ամբոխահաճո կամ ինքնանպատակ քննադատության դեպքում լինելու եմ կառավարության առաջին պաշտպանը, քանի որ ինձ համար չկան ինքնանպատակ գերատեսչական կամ կուսակցական շահեր, կա միայն Հայաստանի ու մեր ժողովրդի շահը, եւ հանուն դրա իրականացվող գործունեությունն եմ միայն համարում արդարացված», ասաց նա: Ավելի ուշ լրագրողների հետ զրույցում էլ նա նշեց, թե պատասխանատվության զգացումով է ստանձնելու վերստին ԱԺ նախագահի պաշտոնը, ուրիշի փոխարեն քվեարկելն արգելելու է: Քվորումի խնդիր կառաջանա՞, քանի որ գործարարներն ի վերջո շատ են ՀՀԿ-ում, հետաքրքրվեց «*Ազգը*». «Մենք կուսակցությունում, կուսակցության նախագահի գլխավորությամբ քննարկել ենք, որ պատգամավորները պետք է ներկա լինեն նիստերին, սա առաջին պայմանն ու պայմանավորվածությունն է եղել բոլոր այն թեկնածուների հետ, որոնք ցանկացել են պատգամավոր դառնալ: Կարգապահություն եւ ներկայություն ԱԺ նիստերին: Եվ ընդհանրապես` 48-50 օր է լինում մեկ տարվա ընթացքում նիստ Ազգային ժողովում, եւ պատգամավորը, գործարար թե ոչ, իր գործերն այնպես պետք է կարգավորի, որ ներկա լինի»: «Բարգավաճ Հայաստանի»` կոալիցիայում չլինելու համար ափսոսո՞ւմ է. «Ափսոսալու խնդիր չկա, ես համերաշխության կողմնակից եմ, որքան միասնական ուժերով մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները լուծենք, այնքան արդյունավետ կլինի: ԱԺ-ն պետք է դառնա բազմակարծության ամբիոն` բազմաթիվ առիթներով ես սա ասել եմ` իմ աշխատաոճը չի փոխվելու»: Հետո էլ նախագահական ընտրությունների ժամանա՞կ է շտաբի պետ լինելու. «Ոչինչ չպետք է բացառել», ասաց: Այսինքն էլի՞ հրաժարական եք տալու, ճշտեցին. «Չէ, էլ հրաժարական չեմ տալու»: Հովիկ Աբրահամյանը խորհուրդ տվեց ոչինչ չբացառել նաեւ այն հարցին ի պատասխան, թե արդյո՞ք ԲՀԿ-ն նախագահական ընտրություններից հետո կրկին կոալիցիա կմտնի: Վստահ էր, որ արդյունավետ է աշխատելու, որ իր պատասխանատվության զգացումն է ավելի բարձրացել ու բոլոր նրբությունները գիտի:**

**Իսկ դահլիճում Հ. Աբրահամյանին ներկայացնելիս Գ. Սահակյանն ու մյուս ելույթ ունեցողները նշում էին նրա փորձը, մարդկանց հետ աշխատելու եւ հարաբերվելու ունակությունները: Մի խոսքով` փակ գաղտնի քվեարկությամբ Հ. Աբրահամյանը ստացավ 102 կողմ քվե, 4 դեմ եւ դարձավ 5-րդ գումարման ԱԺ նախագահը: Փոխնախագահներ ընտրվեցին Էդուարդ Շարմազանովն ու Հերմինե Նաղդալյանը, նրանց հասցեին եւս շատ դրվատական խոսքեր հնչեցին, նրանք ընտրվեցին համապատասխանաբար 91 կողմ եւ 11 դեմ, 89 կողմ եւ 10 դեմ ձայներով:**

**Ի դեպ, ՀՅԴ խմբակցությունը չմասնակցեց ընտրության ողջ գործընթացին:**

**Երեկ նաեւ ներկայացվեցին ԱԺ 12 հանձնաժողովների նախագահների թեկնածությունները` 8 հանրապետական նախագահ, 4` ԲՀԿ-ական: Վերջիններս հետեւյալ պատգամավորներն են` եվրոինտեգրման հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյան, մարդու իրավունքների եւ հանրային հարցերի` Էլինար Վարդանյան, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի Սամվել Բալասանյան, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի` Ստեփան Մարգարյան: ՀՀԿ-ական 6 հանձնաժողովի նախագահներին` (Արա Բաբլոյան, Դավիթ Հարությունյան, Վարդան Այվազյան, Արտակ Դավթյան, Հակոբ Հակոբյան) ավելացան Կորյուն Նիկողոսյանն ու Արտակ Զաքարյանը, ինչպես որ արդեն սպասվում էր:**

**Նոր Ազգային ժողովում ՀՅԴ փոքրիկ խմբակցության ղեկավար լինելու է Արմեն Ռուստամյանը, քարտուղար` Աղվան Վարդանյանը: ՀԱԿ-ում նույնպես որոշել են` խմբակցության ղեկավարը կլինի Լեւոն Զուրաբյանը, քարտուղարը` Արամ Մանուկյանը:**

# Արտագաղթ՝ ինքնացեղասպանություն

Երբ հատկապես արտերկրից հետեւում ես հայաստանյան լրատվամիջոցներին՝ հեռուստատեսությանը թե մամուլին, չես կարող չնկատել այն հսկայածավալ ուշադրությունը, որ հատկացվում է ցեղասպանության թեմային: Անշուշտ, սա մեր ազգի պատմության կարեւորագույն էջն է եւ չի կարելի մոռացության մատնել: Սակայն ստեղծվում է նաեւ այն տպավորությունը, որ ազգային ողբերգությունը երկրի ղեկավարության կողմից շահարկվում է հասարակության ուշադրությունը այն ներքաղաքական անարդար ու վտանգավոր իրողություններից շեղելու համար, որոնցից առաջնայինը չդադարող արտագաղթի խնդիրն է:

Թվում է՝ Հայաստանի առաջին եւ երկրորդ նախագահներին, դատելով նրանց հայտարարություններից, խիստ հուզում է արտագաղթը, որ շարունակվում է երրորդ նախագահի օրոք: Ասես մոռացվում է, թե ով սկիզբ դրեց դրան եւ ով չկարողացավ կանխել: Թվում է, որ տեղի ԶԼՄ-ները Եղեռնից եթե ոչ ավելի, ապա գոնե ոչ պակաս չափով պիտի քննարկեն այդ գերհրատապ հարցը: Մինչդեռ ստացվում է, որ հայոց ղեկավարները, իրենց իսկ ասելով, «ավանդաբար» հաջորդ սերունդներին են ժառանգություն թողնում ոչ միայն ցեղասպանության ճանաչման, այլեւ արտագաղթի լուծման խնդիրը: Եթե, օրինակ, Մոսկվայում (Ռուսաստանում) արդեն ինքնահաստատվել է 90-ականների ներգաղթածների հսկա բանակը, ապա ռուսների համար գնալով ավելի ու ավելի անցանկալի է դառնում նոր սերնդի ներգաղթողների (այդ թվում նաեւ հայերի) մուտքը: Արդյոք ցեղասպանություն չէ՞ տարեկան 50-60-հազարի հասնող ներկա արտագաղթը եւ ինչո՞ւ է վերջինիս այդքան քիչ ուշադրություն հատկացվում: Որ չնեղացնեն Հայաստանի առաջնորդների՞ն: Ցեղասպանության վերաբերյալ հաղորդումների ու մենաբանությունների համեմատ արտագաղթի թեման հարյուրերորդական է: Բովանդակ Հայաստանը հուզախռովվել էր, երբ ոմն գյումրեցի իր նորածին ժառանգին անվանել էր Սարկոզի: Եվ, իհարկե, ոչ մեկին չի հուզում, որ արտագաղթած շատ հայերի երեխաներ Ռուսաստանում արդեն դառնում են Վոլոդյա ու Նատաշա:

Ոչ ոք չգիտի՝ երբեւէ թուրքերը կճանաչե՞ն հայերի ցեղասպանությունը: Հայտնի ու անհայտ բազում պատճառաբանությունների թվում թուրքերն իրենց ժխտողականության մեջ հաշվի են առնում նաեւ գերմանացիների կողմից հրեական սպանդի ճանաչման իրողությունն ու դրա հետեւանքները այն հեղինակած ժողովրդի համար: Նորերս ոչ ուղղակիորեն այդ երեւույթի վրա ուշադրություն էր հրավիրել մոսկովյան թերթերից մեկը: Ի՞նչ է նկատի առնվում:

Լրատվամիջոցը ընդարձակ հոդվածաշար էր հրապարակել մերօրյա Գերմանիայի ու մասնավորապես գերմանացի-Հոլոքոսթ առնչությունների շուրջը: Բոլոր հարցազրույցները տեղի էին ունեցել հենց Գերմանիայում: Մի կողմ էր դրվել տխրահռչակ եվրոպական «քաղաքական նրբանկատությունը», իրողությունները ներկայացվել էին անսեթեւեթ ու մերկապարանոց: Փաստ է, գերմանացիները ճանաչել են 6 միլիոն հրեաների ջարդը, արդեն վճարել են 80 միլիարդ մարկի փոխհատուցում, այդ թվում նաեւ ռազմական համագործակցության միջոցով (սուզանավերի մատակարարում եւ այլն), 100 հազար իսրայելցիներ ձեռք են բերել Գերմանիայի քաղաքացիություն՝ Մերձավոր Արեւելքում պատերազմ բռնկելու դեպքում իրենց երբեմնի արնախում թշնամու երկրում պատսպարվելու համար եւ այլն: Այդուհանդերձ, ի՞նչ է Հոլոքոսթը ժամանակակից գերմանացիների համար:

Ամերիկացիներն ու եվրոպական շատ երկրներ ամեն ինչ անում են, որ երկու համաշխարհային պատերազմ սանձազերծած Գերմանիան չվերածվի անհարկի հզոր պետության (թեեւ նա արդեն Եվրոպայի առաջատար տերությունն է, եւ հույները, իտալացիներն ու իսպանացիները հենց Գերմանիային են մեղադրում իրենց երկրները սնանկացնելու մեջ): Ահա եւ գերմանացիներին կոմպլեքսավորելու, նրանց ռեւանշը կանխելու համար անհրաժեշտ էր բարոյական զսպիչ մի սանձ՝ յուրօրինակ դամոկլյան սուր: Եվ այդպիսին հենց պատերազմից հետո մեղքը ընդունած ազգի համար դարձրին Հոլոքոսթը: Կոլեկտիվ մեղքի գիտակցումը պարտադրվեց բոլոր գերմանացիներին, ստեղծվեց հոգեւոր հիգիենայի մեխանիզմ այդ ժողովրդին «դարչնագույն ժանտախտից» հեռու պահելու համար: Որպեսզի Գերմանիան չկարողանա այլեւս դառնալ տիրակալների տերություն: Այսօր Գերմանիայի հրեական համայնքը ի զորու է հուժկու հարվածներ հասցնելու այն քաղաքացիներին, որոնք հանդես չեն գալիս իսրայելամետ քաղաքականության օգտին: Իսրայելի ներկայիս վարչապետ Նաթանյահուն հայտարարում է, որ գերմանացիների փոխհատուցումը կազմում է հրեաների կորցրած ունեցվածքի սոսկ 20 տոկոսը: Այսինքն, գերմանացիների եւս մի քանի սերունդ պիտի վճարի իր պապերի մեղքերի դիմաց:

Եթե գերմանացիների հետպատերազմյան առաջին սերունդը պարզապես ընդունում ու լռում էր հրեական հարցի կապակցությամբ, ապա երկրորդ սերունդը խոսում էր: Իսկ ահա երրորդը արդեն հոգնել է հոգեբանական վնասվածքից, թերարժեքության բարդույթից եւ փորձում է առաջ նայել: Մենք չենք ուզում քարշ տալ այդ ծանր բեռը, հանգիստ թողեք մեզ, կյանքն առաջ է գնում՝ ասում է նա: Ինչքա՞ն կարելի է թողություն խնդրել: Հոլոքոսթի պատճառով գերմանացին այսօր վախենում է հպարտանալ իր ազգային ինքնությամբ (իսկ թուրքն իրեն բնության հրաշք է համարում): Եվ արդյո՞ք խեղդված դժգոհության ու անբարյացակամության պոռթկում չէ նեոնացիզմի վերածնունդը: Գերմանացիների ներկա սերունդն արդեն չի թաքցնում, որ զզվել ու հոգնել է Հոլոքոսթից, մշտական հիշատակումներից, նյութական արտաներարկումներից, մեղքը ազդեցության լծակ դարձնելու միջոցով իրենց երկիրը թուլացնելու ու այն վերահսկելու օտար փորձերից:

Եվ սա է «ուսանելի» թուրքերի համար: Օրինաչափ է, երբ հենց Եվրոպայում է Էրդողանը հայտարարում, որ չի եղել հայերի ցեղասպանություն, այլ եղել են սոսկ սպանություններ: Ինչո՞ւ գերմանացիների կենդանի օրինակով ծանր պարտավորությունների մեջ մտնել:

Համոզված չլինելով (համենայն դեպս՝ ժամանակի առումով) թուրքերի ինքնախարազանման մեջ, հայերս հսկայական էներգիա ենք ծախսում, որ նրանք այնուամենայնիվ ընդունեն իրենց կատարած ոճրագործությունը: Թուրքը երբեք գերմանացի չի դառնա, բայց կսովորի գերմանացուց: Իսկ անտեսելով արտագաղթի կործանարարությունը մեր ժողովրդի համար՝ մենք գործում ենք ինքնացեղասպանություն, ինքնամեղսագործություն:

Եվ ո՞վ ո՞ւմ պիտի մեղադրի:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# «Էրդողանն ինչին դիպչում է, խորտակում է. հայ-թուրքական հարաբերություններն էլ բացառություն չեն»

Թուրքիայի Ազգային մեծ ժողովում երեսուն մանդատ ունեցող քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության խորհրդարանական խմբակցության փոխղեկավար **Հասիփ Քափլանը** Շռնկա նահանգն է ներկայացնում: Տարածքի բնակչության 99 տոկոսը քրդեր են, հիմնական զբաղմունքերն էլ անասնապահությունն ու սահմանային առեւտուրն են: Բնակչությունը կազմում է 550.000: Ժամանակին Շռնկայում եղել են նաեւ հայկական գյուղեր, սակայն երեսուն տարի առաջ հայերը լքեցին իրենց բնակավայրերն ու հաստատվեցին Ստամբուլում: Նահանգի գյուղերից մեկում է ծնվել Ռաֆել Դինքը: Վերջին տարիներին փոխհրաձգության պատճառով Շռնկան դարձել է քրդական բախումների կիզակետ: Նահանգի յուրաքանչյուր ընտանիքի անդամ քրդական հարցի պատճառով կամ կալանավորված է, կամ թաքնվում է սարերում: Նույն նահանգից ընտրված եւս երկու կուսակիցներ կալանավորված են: Խորհրդարանական ընտրությունների քարոզարշավին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին ահաբեկիչ անվանելու պատճառով 700 կուսակցականներ այսօր բանտում են: Ձերբակալված համակիրների թիվն անցնում է 8.000-ը: «Նրանց մեծ մասը ճաղերի հետեւում են քուրդ լինելու, գաղափարների եւ ազատ խոսքի արտահայտման պատճառով», ասում է Քափլանը՝ հավելելով, որ թեպետ Էրդողանի կուսակցությունը հիմնված է իսլամական գաղափարների վրա, սակայն վերջին շրջանում դիտարկվում է որպես ծայրաստիճան ֆաշիստական գաղափարախոսություն կրող: «Այսօր երկրում բոլոր ուժային կառույցները հավաքվել են Էրդողանի կուսակցության շուրջը, եւ երկրի բոլոր ուժերը միավորվում են այդ կուսակցությունում», ասում է Քափլանը՝ ընդգծելով, որ առավել ազատ եւ հավասար իրավունքներ արտահայտող սահմանադրություն ունենալու անհրաժեշտություն է զգացվում: Թեպետ նախապես ծրագրված էր, որ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության նախընտրական ցուցակում կլինի նաեւ հայ թեկնածու, սակայն վերջին պահին ծրագրերը փոխվեցին: Քափլանի գնահատմամբ՝ դա երկխոսության բացակայության եւ կուսակցության բացթողման հետեւանք է: «Բացի դրանից՝ հայ թեկնածուին ընդգրկելը նշանակում էր քաղաքական որոշում իրականացնել: Ստրատեգիական առումով խորհրդարանում երեսուն պատգամավոր ունենալը լուրջ թիվ է, իսկ հայ ներկայացուցիչը կարող էր մեր ծրագրերը խառնել», ասում է նա՝ հավաստիացնելով, որ բացը կլրացվի 2014-ին: Սակայն դա չի խանգարում, որ խորհրդարանում բարձրաձայնեն նաեւ այլ ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Ազգային փոքրամասնությունների նկատմամբ ժողովրդավարություն եւ վերաբերմունքի փոփոխություն, հանդուրժողականություն եւ խղճի, մտքի ու գաղափարների ազատություն Քափլանը չի նկատում: Նրա ներկայացմամբ՝ թեպետ Էրդողանը յուրաքանչյուր հարմար առիթ օգտագործում է հայտարարելու, որ երկրում այդ հարցի վերաբերյալ նկատվում է առաջխաղացում, սակայն իրականությունն այլ է: «Քրդերին տրված ժողովրդավարության ու առաջխաղացման մասին խոսակցությունները սուտ են: Երկրում լուրջ ազգայնամոլություն է նկատվում: Էթնիկ հողի վրա առկա է թշնամություն: Եթե մենք տասը տարի առաջ 500.000 հոգով հավաքվում էինք Նովրուզը նշելու եւ մեր հարեւանությամբ զգում էինք ռումբերի առկայությունը, ապա այսօր Էրդողանի կուսակցությունն առաջադիմել է: Նովրուզի օրերին գազային թունավորումները ստանում ենք ուղղաթիռներից»:



Կուսակցության ներկայացուցիչը պատմում է, որ 2008-ից հեռուստատեսությամբ եւ տարբեր քննարկումների ժամանակ առավել շատ խոսվեց հայկական հարցի, փոքրամասնությունների մասին, սակայն այսօր այդ ձայնագրությունները հավաքվում են, ուսումնասիրվում, եւ նրանք, ովքեր խոսել են այդ թեմայով, ձայնագրությունների հիման վրա ահաբեկչության կասկածանքով ձերբակալվում են: «**Ազգի**» հարցին, թե ինչո՞ւ Էրդողանը տապալեց հայ-թուրքական հարաբերությունների հաստատման գործընթացը, Քափլանը յուրահատուկ պատասխան տվեց:

«Հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ երկու բան կարող եմ ասել՝ Էրդողանի ձեռքն ինչին դիպչում է, խորտակում է: Կիպրոսին ձեռք մեկնեց՝ խորտակվեց, քրդական հարցին ձեռք մեկնեց՝ խորտակվեց, հայ-թուրքական արձանագրություններն ու հայկական հարցն էլ բացառություն չեն: Էրդողանն ում համբուրում է, վերջինս մահանում է: Քադդաֆիին համբուրեց՝ մահացավ, Օբամային է համբուրել, տեսնենք՝ ինչ կլինի», ասում է նա՝ հավելելով, որ խորհրդարանական երեք խմբակցությունները՝ «Արդարություն եւ բարգավաճումը», Ազգայնական շարժումն ու Ժողովրդա-հանրապետականը հայկական հարցի վերաբերյալ գրեթե միանման բացասական կարծիք ունեն:

Քափլանը հիշում է, որ երբ Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը, վերոնշյալ երեք խմբակցությունների ղեկավարները բացասական տեքստ գրեցին: «Առաջարկեցին, որ ես էլ ստորագրեմ, սակայն մեր կուսակցությունը հրաժարվեց, եւ խորհրդարանի նախագահի ելույթը շատ ավելի մեղմ էր»: Քափլանի փոխանցմամբ՝ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի ղեկավարած կուսակցություններն ընկերներ են: «Մեկը քրիստոնեա-պահպանողական է, մյուսը՝ մուսուլման: Երկուսն էլ ցանկանում են հայերին եւ քրդերին օգտագործել: Սակայն սոցիալիստների վերաբերմունքն այս հարցում այլ է: Նրանք ճնշված ազգերի եւ փոքրամասնությունների հետ լավ հարաբերություններ ունեն: Այժմ գործը մեր ուսերին է, մենք պետք է լավ հարաբերություններ ստեղծենք Օլանդի կառավարության հետ»:

Թեպետ «Ժողովրդավարություն եւ խաղաղություն» կուսակցությունը հայտարարել էր, որ օրինագիծ է ներկայացնել ապրիլի 24-ը հայերի տառապանքի օր հռչակելու համար, սակայն վստահ են, որ օրինագիծը չի անցնի: Պատճառը թուրքական հասարակության խիստ ռիսկային եւ բացասական արձագանքն է: «Վստահ չեմ, որ օրինագիծը կընդունվի: Դրա համար մենք որոշել ենք ընդհանուր փաթեթ ներկայացնել, որը կկոչվի Թուրքիայի պատմության առերեսում եւ կներառի Թուրքիայի իրականացրած բոլոր կոտորածները, այդ թվում՝ հայերի»: Քափլանը վստահ չէ, որ ներկայիս իշխանությունները կկարողանան առերեսվել պատմական ճշմարտությանը: Պատմությունն ընդունել չի ցանկանում նաեւ հասարակությունը, որը ցեղասպանության հարցում ազգայնամոլության դիրքերից է խոսում: «Դինքի սպանությունը ներառում էր գրեթե ամեն ինչ՝ ազգայնամոլություն, լրագրություն, քրդեր, հայկական հարց», ասում է նա՝ ընդգծելով, որ միակ ելքը երկխոսությունն է, սակայն ոչ թե պետությունների, այլ հասարակությունների միջեւ:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Անկարա, Թուրքիա**

# Սկանդալային Բաքու. «Մեկ ազգ, երկու պետության» բումերանգը

Պաշտոնական Բաքուն հայտնվել է սեփական «անկախ արտաքին քաղաքականության» ծուղակում: Հանդիպելով «իր երկրում» ուսումնառություն անցնող թուրք եւ ադրբեջանցի մի խումբ երիտասարդների, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության նախագահ» Դերվիշ Էրօղլուն սկանդալային բացահայտում է արել: Նա բառացիորեն ասել է. «Բաքվում գործում է «ՀԿԹՀ» մշտական ներկայացուցչություն, բայց մենք ակնկալում ենք, որ Ադրբեջանը հայտարարի պաշտոնական ճանաչման մասին»:

Ավելի վաղ Իլհամ Ալիեւի աշխատակազմում հասարակական-քաղաքական հարցերի վարչության պետ Ալի Հասանովը թուրքական լրատվամիջոցներին պարզաբանել էր. «Եթե մենք ճանաչենք «ՀԿԹՀ»-ն, ապա հաջորդ օրը Հայաստանի դաշնակիցները նույնը կանեն ԼՂ-ի հանդեպ»: Ըստ երեւույթին, Էրօղլուին այդ բացատրությունը չի բավարարել, եւ նա հրապարակային բացահայտում է արել, որ Ադրբեջանը փաստացի ճանաչում է «իր երկրի անկախությունը»:

Միջազգային ամենատարբեր հարթակներում պաշտոնական Բաքուն հանդես է գալիս իբրեւ «բոլոր երկրների ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքի երդվյալ պաշտպան»: Իրականում, մինչդեռ, Բաքվում գործում են «Իչկերիայի հանրապետության» եւ «ՀԿԹՀ» մշտական ներկայացուցչություններ: Չեչենների պարագայում, ճիշտ է, դա կոչվում է «մշակութային կենտրոն»: Բայց ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այդ «կենտրոնն» է կարգավորում Չեչնիայից անլեգալ ճանապարհով Բաքու հասնող «վտարանդիների» խնդիրները: Մասնավորապես, Թուրքիա անցնելու հարցում ադրբեջանական պետական մարմինները նրանց ցուցաբերում են անհրաժեշտ օգնություն:

Ինչո՞վ է զբաղվում «ՀԿԹՀ մշտական ներկայացուցչությունը» Բաքվում, հայտնի չէ: Դերվիշ Էրօղլուն միայն ասել է, որ «հազարավոր ադրբեջանցի երիտասարդներ բարձրագույն կրթություն են ստանում «ՀԿԹՀ» համալսարաններում»: Այսպիսով, առնվազն կրթամշակութային եւ զբոսաշրջության հարցերում Ադրբեջանը սերտորեն համագործակցում է միջազգային հանրության կողմից չճանաչված «պետության» հետ:

Բայց սա, ինչպես ասում են, «չարիքներից փոքրագույնն է»: Մայիսի 31-ին Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ Էլման Աբդուլլաեւը շատ զգուշորեն «հերքել է» միջազգային մամուլի հրապարակումները, որ «Ադրբեջանը զենք է մատակարարում Սիրիային»: Արտաքին քաղաքական գերատեսչության ներկայացուցչի «հերքումից» միայն հնարավոր էր կռահել, որ խոսքը ոչ թե Սիրիայի պաշտոնական կառույցներին, այլ իշխանությունների դեմ զինված պայքար մղող ապստամբներին ադրբեջանական կողմից զենքի մատակարարմանն է վերաբերում:

ԱԳՆ խոսնակի «հերքմանը» գրեթե զուգահեռ, տեղեկատվական դաշտում հայտնվեց Միլլի մեջլիսի պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի փոխնախագահի Այդըն Միրզազադեի «մեկնաբանությունը»: Ըստ այդմ, «իրականությանը չի համապատասխանում Dailystar պարբերականի հաղորդած լուրը, որ սիրիացի ապստամբները զենք են ստանում Բուլղարիայից, Հունաստանից, Վրաստանից եւ Ադրբեջանից»: Խորհրդարանականն, ընդսմին, հարկ է համարել «հերքումը հիմնավորել» նրանով, որ «Ադրբեջանը սեփական խնդիրներն ունի, մեր տարածքի «20 տոկոսն օկուպացված է» (չակերտները մերն են- Վ. Ա.), եւ մենք ամրապնդում ենք սեփական զինված ուժերը»:

Նման դեպքերում ասում են՝ «արջը յոթ երգ գիտի, յոթն էլ մեղրի մասին»: Իսկ այժմ՝ ըստ էության: Հիշյալ «հերքման» մեջ Միրզազադեն թույլ է տվել մի ուշագրավ դիտարկում: Նա ասել է. «Արեւմուտքը հնարավորություն ունի ստուգելու նման տեղեկատվությունների իսկությունը»: Բանն այն է, որ Արեւմուտքը գուցե եւ նման հնարավորություն իրոք ունի, բայց ցանկություն՝ հազիվ թե: Քանի որ արեւմտյան ալյանսի երկրները, ինչպես եւ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան, «սրբազան պատերազմ են հայտարարել» Սիրիայի իշխանությունների դեմ, ուստի շահագրգռված են, որ ապստամբներին զենք եւ զինամթերք մատակարարվի:

Շատ հնարավոր է, որ Միրզազադեն նպատակ է ունեցել հասկացնելու, որ «ամեն ինչ արվում է Արեւմուտքի գիտությամբ»: Նման ենթադրության մղում է Ադրբեջանի ԱԳՆ ներկայացուցչի խուսափողական ակնարկը, որ իր երկիրը «չի քննարկում Սիրայից դիվանագիտական ներկայացուցչությունը տարհանելու խնդիր»: Վերջին օրերին, ինչպես հայտնի է, մի շարք երկրներ, այդ թվում եւ Թուրքիան, Դամասկոսից հետ են կանչել իրենց դեսպաններին: Միաժամանակ հայտնի է դարձել, որ Իսրայելը եւ Ադրբեջանը զենքի եւ զինատեսակների շուրջը նոր պայմանավորվածությունների են հասել:

Իսրայելի եւ Սիրիայի հարաբերությունները գրեթե պատերազմական են տասնամյակներ ի վեր: Չի բացառված, որ Ադրբեջանի կողմից Իսրայելում ձեռք բերվող զենքի մի մասն իրոք մատակարարվում է սիրիացի ապստամբներին: Ուշագրավ է նաեւ, որ Ադրբեջանը համառ նպատակադրվածությամբ փչացնում է հարաբերությունները Իրանի հետ: Մայիսի 30-ին Բաքուն Թեհրանին բողոքի 3 նոտա է հղել: Իսկ նախօրեին այդ երկրում Ադրբեջանի դեսպանը լքել է նստավայրը եւ վերադարձել հայրենիք՝ «խորհրդատվություններ անցկացնելու նպատակով»:

Այս ամենը թույլ է տալիս եզրահանգել, որ Ադրբեջանը, կամա թե ակամա, հայտնվել է անկանխատեսելի հետեւանքներով հղի իրավիճակում: Պատճառը ոչ միայն իշխող վարչախմբի հավակնոտությունն է, այլեւ «մեկ ազգ, երկու պետություն» գաղափարախոսությունը, ինչի հետեւանքով միջազգային հարաբերությունների տեսակետից նուրբ հարցերում Բաքուն ստիպված է հանդես գալ որպես Անկարայի կցորդ: Իրավիճակը կարող է ունենալ բումերանգի էֆեկտ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# «Եթե ռազմաբազա տրամադրի, գլխին փորձանք է բերելու»

## *Հոխորտացել է Հյուսիսային Կիպրոսի թուրք ղեկավարը նախագահ Խրիստոֆիասի վրա*

«Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» ինքնակոչ նախագահ Դերվիշ Էրօղլուի հոխորտանքը նախորդ օրը հնչեց թուրքական հանրային հեռուստատեսության «Ավազ» ալիքում: Ինչպես գրում է հեռուստատեսության կայքէջը, Էրօղլուն, պատասխանելով հաղորդավարի հարցին, նշել է, որ Կիպրոսի նախագահ Խրիստոֆիասը Բենիամին Նաթանյահուին հորդորել է թույլ չտալ Իսրայելցի գործարարներին ներդրում անելու կղզու հյուսիսային՝ թուրքական հատվածում: Իսրայելի վարչապետն էլ փոխարենը Խրիստոֆիասից պահանջել է ռազմածովային եւ ռազմաօդային բազա տրամադրել իրենց Կիպրոսի տարածքում:

Ներկայացնելով հարցի էությունը՝ Էրօղլուն շարունակել է. «Իսրայելի պահանջներին ընդառաջելու դեպքում Խրիստոֆիասը մեծ փորձանք կբերի իր գլխին: Դրանով նախ կխախտվի Եվրոմիության անդորրը: Միաժամանակ խիստ կվրդովեցնի մեզ, ինչպես նաեւ մայր հայրենիք Թուրքիային: Երրորդ. եթե Իսրայելը ռազմական ուժ եւ ռազմաբազա տեղակայի Կիպրոսում, լուրջ գլխացավանք կպատճառի հունական կողմին: Չեմ կարծում, որ հույները գլխացավանքի գնով այդ քայլին դիմեն»:

Պարզվում է, ռազմաբազայի մասին լուրերը տարածվել են Կիպրոսից Իսրայել նավթամուղի անցկացման ծրագրի շուրջը, որի թուրքական ոտնձգություններից պաշտպանելու, այսպիսով՝ անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է Կիպրոսում տեղակայել իսրայելական ռազմաբազա եւ 20-հազարանոց զորք: Ի դեպ, Կիպրոսում թուրքական զորք է տեղակայված դեռեւս 1974-ին, դրա թվակազմը ներկայումս 37 հազար է:

Հ. ՉԱՔՐՅԱՆ



# Լարիջանի. «Սիրիայում Արեւմուտքի միջամտությունը ողբալի հետեւանք կունենա Իսրայելի համար»

## *ԱՄՆ-ը չի բացառում միջամտությունը*



Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին օրենսդիր մարմնի հերթական նիստի բացման ժամանակ հայտարարել է, որ Սիրիայի իրադարձություններին Արեւմուտքի միջամտության ամեն մի փորձ անչափ ողբալի հետեւանքներ կունենա Իսրայելի համար:

«Ամերիկյան բանակի հրամանատարության ներկայացուցիչները, ըստ երեւույթին, վատ են գլուխ հանում մերձավորարեւելյան իրողություններից: Սիրիան Լիբիա չէ, եւ այնտեղ նոր Բենգազի ստեղծելու փորձերը կհանգեցնեն այն բանին, որ հրդեհը կտեղափոխվի Պաղեստին, ճարակելով սիոնիստական վարչակարգը», ասել է նա:

Խորհրդարանի նախագահը տարակուսանք է արտահայտել, որ ԱՄՆ-ը «չնկատեց» Բահրեյնի զավթումը Սաուդյան Արաբիայի կողմից: Նա «տարածաշրջանի հետադիմական վարչակարգերին» մեղադրել է Սիրիայի քաղաքացիական պատերազմի հրձիգներին զենք եւ դրամ փոխանցելու մեջ:

Նախօրեին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ֆրանսիական France 24 հեռուստաալիքին տված հարցազրույցում ասել էր, որ իր երկիրը չի վախենում Իսրայելի հնարավոր հարձակումից: Նրա խոսքերով՝ «Ամենքի համար պարզ է, թե ինչ կլինի Իսրայելի հարձակման դեպքում»:

Իրանցի ղեկավարների եւ մասնավորապես Լարիջանիի խոսքերը կապված են Վաշինգտոնում վերջին օրերին իշխող տրամադրությունների հետ, նշում է Ռոյթեր գործակալությունը: ԱՄՆ-ը չի բացառում Սիրիայում ռազմական գործողության ձեռնարկման հնարավորությունը: ՄԱԿ-ի ԱԽ-ում ԱՄՆ-ի մշտական ներկայացուցիչ Սյուզան Ռայսի խոսքերով, ռազմական միջամտությունը կարող է տեղի ունենալ նույնիսկ շրջանցելով ՄԱԿ-ի ԱԽ որոշումները: Իր ելույթում Ռայսը նշել է, որ այսուհետեւ Սիրիայում դեպքերը կարող են զարգանալ մի քանի սցենարով, ըստ որում խաղաղ զարգացումը քիչ հավանական է:

«Կա զարգացման երկու սցենար, բայց դրանցից վատթարագույնը առավել հավանական է: Սիրիայում բռնությունը ծավալվում է, հակամարտությունը տարածվում է տարածաշրջանի երկրներում: Կոֆի Անանի ծրագիրը չի գործում: Միջազգային ընկերությանը մնում է գործողություններ ձեռնարկել Անանի եւ ԱԽ-ի ծրագրից դուրս», հայտարարել է Սյուզան Ռայսը:

Ի դեպ, սիրիական ընդդիմությունը արդեն սկսել է վերջնագրեր ներկայացնել նախագահ Բաշար Ասադին: Այսպես, «Սիրիական ազատ բանակի» հրամանատարությունը YouTube համացանցային ծառայությունում հրապարակել է տեսահոլովակ, որով սիրիական վարչակարգին 48 ժամ է տալիս ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ ներկայացուցիչ Կոֆի Անանի ծրագիրը կատարելու համար: Կարգավորման այդ ծրագիրը մասնավորապես նախատեսում է երկրի բնակավայրերից կառավարական զորքերի հրետանային եւ զրահատանկային ստորաբաժանումների դուրսբերում:

Ապստամբները նշում են, որ հակառակ դեպքում իրենք իրենց զերծ կհամարեն ամեն տեսակ պարտավորություններից եւ գործողություններ կձեռնարկեն «խաղաղ բնակիչներին պաշտպանելու» համար:

Պաշտոնական Դամասկոսը պնդում է, որ կառավարական զորքերը կռվում են ահաբեկիչների եւ գրոհայինների դեմ, իսկ խաղաղ բնակիչների սպանությունները կազմակերպում են ահաբեկչական խմբավորումները, մասնավորապես «Ալ Ղաիդան»:

# Հարյուրավոր ձերբակալություններ Տիբեթում

Տիբեթի վարչական կենտրոն Լհասա քաղաքում Չինաստանի անվտանգության ծառայությունների աշխատակիցները կալանավորել են հարյուրավոր մարդկանց: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ ձերբակալությունների ալիքը սկսվել է մայիսի 27-ին բուդդայական երկու վանականների ինքնահրկիզման ակցից հետո:

«Ազատ Ասիա» ռադիոկայանի տվյալներով, մայիսի 27-ից Տիբեթում զանգվածային դժգոհության եւ անկարգությունների պայմաններում կալանավորվել է մոտ 600 մարդ: Ռոյթերը նշում է, որ ձերբակալվածների թիվը անհնար է ճշտել անկախ աղբյուրներից, քանի որ օտարերկրացի լրագրողներին արգելվում է մուտք գործել Տիբեթ:

«Ազատ Ասիա» ռադիոկայանը հաղորդում է, որ մայիսի 30-ին տիբեթցի մի կին իրեն հրկիզել է ՉԺՀ Սիչուանի նահանգում:

ՉԺՀ իշխանությունները հանուն Տիբեթի անկախության իրենց հրկիզող մարդկանց հայտարարել են «ահաբեկիչներ» ու հանցագործներ եւ Դալայ-լամային ու տիբեթցի տարագիր մյուս գործիչներին ամբաստանել են նման գործողությունների հրահրման մեջ:

Հաղորդվում է, որ մայիսի 27-ին ինքնահրկիզված երկու վանականներից մեկը մահացել է, մյուսը ողջ է մնացել:

2011-ի մայիսից ՉԺՀ իշխանության դեմ բողոքելով իրենց հրկիզել են առնվազն 35 տիբեթցիներ: Նրանցից առնվազն 27-ը մահացել են:

# Հայ ծանրորդները նախապատրաստվում են օլիմպիական խաղերին

Լոնդոնի ամառային 30-րդ օլիմպիադային նախապատրաստվող Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականները մայիսի 9-30-ը Ֆեոդոսիայում ուսումնամարզական հավաք անցկացրին: Ամենօրյա քրտնաջան մարզումների միջոցով հայ ծանրորդները ձգտում են լավ մարզավիճակ ձեռք բերել, որպեսզի Լոնդոնում կարողանան պայքար մղել օլիմպիական պարգեւների համար:

Ինչպես հայտնի է, Լոնդոնի օլիմպիադայում Հայաստանը ներկայացնելու են 6 մարզիկներ՝ 4 ծանրորդներ եւ 2 մարզուհիներ: Թե ո՞ւմ բախտ կվիճակվի օլիմպիական մրցահարթակ դուրս գալու, վերջնականապես պարզ կդառնա հունիսի 15-ին:

Իսկ առայժմ օլիմպիադային մասնակցելու համար համառ մրցակցություն է ծավալվել Հայաստանի տղամարդկանց հավաքականում: Ուսումնամարզական հավաքին մասնակցում էին աշխարհի չեմպիոն Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանը (77 կգ), Վանիկ Ավետիսյանը (69 կգ), Արա Խաչատրյանը (85 կգ), Նորայր Վարդանյանը (94 կգ) եւ գերծանրքաշային Ռուբեն Ալեքսանյանը:


AFP / PHOTOLURE

Կանանց հավաքականում ամեն ինչ պարզ է: Օլիմպիադա կմեկնեն Մելինե Դալուզյանը (69 կգ) եւ գերծանրքաշային Հռիփսիմե Խուրշուդյանը:

Տղամարդկանց օլիմպիական հավաքականի թեկնածուներից երկուսը՝ Առաքել Միրզոյանն (77 կգ) ու Արայիկ Միրզոյանը (85 կգ) մարզումները շարունակում էին Հայաստանում իրենց անձնական մարզչի՝ օլիմպիական խաղերի չեմպիոն Օգսեն Միրզոյանի գլխավորությամբ:

Ինչպես հայտնի է, ապրիլին կայացած Եվրոպայի մեծահասակների առաջնությունում օլիմպիական թեկնածուների մեծամասնությունը հանդես չեկավ՝ ուժերը պահելով Լոնդոնի մրցահարթակում բարձր արդյունքներ ցույց տալու համար: Թե որքանով դա կհաջողվի, հայտնի կդառնա հուլիսի վերջին, երբ կսկսվի օլիմպիական մրցաշարը: Իսկ առայժմ հայ ծանրորդները մարզումները կշարունակեն Հայաստանում՝ ձգտելով բարելավել ցուցանիշները:

# Եվրոպայի չեմպիոնը ջախջախեց Կորեային

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մեկնարկին հաշված օրեր են մնացել: Առաջնության մասնակից հավաքականները վերջին փորձամրցումներն են անցկացնում՝ ձգտելով լավ մարզավիճակով ներկայանալու տարվա գլխավոր ֆուտբոլային ստուգատեսին:



Աշխարհի եւ Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի հավաքականը թիմի կազմը վերջնականապես կազմավորելուց հետո ստուգողական առաջին խաղն անցկացրեց: Իսպանացիները Շվեյցարիայի Բեռն քաղաքում 4-1 հաշվով ջախջախեցին Հարավային Կորեայի ընտրանուն: Արդեն 12-րդ րոպեին Ֆեռնանդո Տորեսը բացեց հաշիվը: Մրցակիցն առաջին խաղակեսի ավարտին վերականգնեց հավասարակշռությունը: Սակայն 2-րդ խաղակեսում Ալոնսոն 11 մ հարվածով, Կասոռլան եւ Նեգրեդոն ավարտեցին հարավկորեացիների ջախջախումը:

Ի տարբերություն սերբերի հետ նախորդ հանդիպման, այս անգամ հավաքականի կազմում էին «Բարսելոնի» 7 ֆուտբոլիստները: Ընդհանուր առմամբ Վիսենտե Դել Բոսկեն Եվրոպայի առաջնությանը նախապատրաստվող Իսպանիայի հավաքականի կազմում ընդգրկել է աշխարհի 19 չեմպիոնների:

Հարավային Կորեայի հետ խաղում Իսպանիայի հավաքականի դարպասապահ Իկեր Կասիյասը յուրօրինակ ռեկորդ սահմանեց: 130-րդ անգամ պաշտպանելով իսպանացիների դարպասը, Կասիյասն իր թիմակիցների հետ հավաքականում 95-րդ հաղթանակը տոնեց: Նա գերազանցեց Ֆրանսիայի հավաքականի նախկին պաշտպան Լիլիան Թյուրամի եւ եգիպտացի Ահմեդ Հասանի համաշխարհային ռեկորդը, որոնք մասնակցել են իրենց երկրների ընտրանիների հաղթական 94 հանդիպման: Եթե Թյուրամը վաղուց ավարտել է ելույթները, ապա եգիպտացին դեռեւս շարունակում է ելույթները երկրի հավաքականի կազմում: Նա հավաքականի ռեկորդակիրն է անցկացրած խաղերի քանակով (179), ուստի Ահմեդ Հասանը հնարավորություն ունի շրջանցելու Կասիյասին: Ճիշտ է, դա անելն այնքան էլ հեշտ չի լինի, քանի որ Իսպանիայի հավաքականը բավական հաջող է հանդես գալիս:

Գոլառատ էր նաեւ Շվեդիայի եւ Իսլանդիայի հավաքականների մրցավեճը, որում 3-2 հաշվով հաղթեցին շվեդները: Արդեն 5-րդ րոպեին շվեդների առաջատար Զլատան Իբրահիմովիչը բացեց հաշիվը: Առաջին խաղակեսն ավարտվեց շվեդների հաղթանակով՝ 2-1: Հյուրերը 2-րդ գոլը խփեցին խաղի ավելացված ժամանակում:

Աշխարհի փոխչեմպիոն հոլանդացիները Ռոտերդամում 2-0 հաշվով հաղթեցին Սլովակիայի հավաքականին: Ընկերական նախորդ 2 հանդիպումներն անհաջող էին դասավորվել հոլանդացիների համար, որոնք պարտվել էին Մյունխենի «Բավարիային» եւ Բուլղարիայի հավաքականին:

Ֆուտբոլի աշխարհի 2014-ի ընտրական մրցաշարին նախապատրաստվող ԱՄՆ-ի եւ Բրազիլիայի հավաքականների մրցավեճում հաջողությունն ուղեկցեց աշխարհի հնգակի չեմպիոններին, որոնք հաղթեցին 4-1 հաշվով: Բրազիլացիներից հաշիվը 12-րդ րոպեին 11 մ հարվածով բացեց Նեյմարը: Մյուս գոլերի հեղինակներ դարձան Սիլվան, Մարսելոն ու Պատոն: Ընդ որում բրազիլացիները խաղադաշտ էին դուրս բերել հիմնականում 20-22 տարեկան ֆուտբոլիստների, որոնք պետք է կազմեն հավաքականի կորիզը 2014-ի աշխարհի առաջնությունում, որի հանդիպումները կայանալու են Բրազիլիայում:

Ադրբեջանի հավաքականին չհաջողվեց հաղթել եվրոպական ֆուտբոլի բացահայտ հետնապահներից մեկին՝ անդորրացիներին: Դարպասները մնացին անառիկ: Ռումինիայի հավաքականը հյուրընկալվելիս 1-0 հաշվով հաղթեց շվեյցարացիներին:

ՇԱԽՄԱՏ

# Ոչ-ոքի առաջատարների մրցավեճում

Բուլղարիայի Ալբենա քաղաքում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում հաջող մրցելույթներն են շարունակում հայ շախմատիստները: Մրցաշարի 5-րդ տուրում ուշադրության կենտրոնում երկու առաջատարներ Հրանտ Մելքումյանի եւ Իվան Չեպարինովի մրցավեճն էր: 2 շախմատիստներն էլ մեկնարկում 4-ական անընդմեջ հաղթանակ էին տոնել: Առաջատարների մրցավեճն ավարտվեց խաղաղ արդյունքով: 4,5-ական միավորով աղյուսակը շարունակում են գլխավորել Մելքումյանն ու Չեպարինովը: 6-րդ տուրում Մելքումյանը սպիտակներով կխաղա բուլղարացի Վասիլ Սպասովի հետ, իսկ Չեպարինովի մրցակիցը կլինի Թուրքիան ներկայացնող Դրագան Սոլակը:

Առաջատարներից կես միավորով են հետ մնում գրոսմայստեր Վլադիմիր Հակոբյանը, միջազգային վարպետներ Հովհաննես Գաբուզյանն ու Կարեն Գրիգորյանը: Հակոբյանը սեւերով պարտության մատնեց միջազգային վարպետ Կանտոլի Ռասնակարանին: Տուրը հաղթական էր նաեւ Կարեն Գրիգորյանի համար, որն առավելության հասավ Ադրիանա Նիկոլովայի նկատմամբ: Իսկ Գաբուզյանը հաշտություն կնքեց Վասիլ Սպասովի հետ:

3,5-ական միավոր ունեն Ավետիք Գրիգորյանը, Տիգրան Պետրոսյանն ու Վահե Բաղդասարյանը: Նշված եռյակից հաղթանակ տոնեց միայն Տիգրան Պետրոսյանը, որը խաղում էր Նայդեն Դոբրեւի հետ: Իսկ Գրիգորյանն ու Բաղդասարյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Թամիր Նաբաթիի եւ Լի Շիլոնգի հետ:

Հայ շախմատիստներից ամենացածր արդյունքն ունի գրոսմայստեր Նելլի Աղինյանը: Նա 2,5 միավորով մրցաշարի 123 մասնակիցների մեջ 55-րդն է: Հայ շախմատիստուհին ոչ-ոքի խաղաց Ֆիոնա Ստելի հետ:

# Հաղթական մեկնարկը շարունակություն չունեցավ

Երեկ Բաթումում մեկնարկեց կանանց արագ շախմատի աշխարհի առաջնությունը: Մասնակից 50 շախմատիստուհիները շվեյցարական մրցակարգով, 11 տուրով կորոշեն աշխարհի չեմպիոնուհուն: Մրցաշարը կտեւի 4 օր, որից հետո կկայանա կայծակնային խաղի աշխարհի կանանց առաջնությունը նույն 50 շախմատիստուհիների մասնակցությամբ: Չեմպիոնուհին կորոշվի 15 տուրերի արդյունքներով: Ընդ որում յուրաքանչյուր տուրում մրցակիցները միմյանց հետ 2 անգամ կհանդիպեն սպիտակ եւ սեւ խաղաքարերով: Հետաքրքրական է, որ Բաթումում անցկացվող արագ շախմատի աշխարհի առաջնությանը մասնակցում են միանգամից աշխարհի 5 նախկին չեմպիոնուհիներ՝ Նոնա Գապրինդաշվիլին, Մայա Չիբուրդանիձեն, Ժու Չենը, Անտուանետա Ստեֆանովան եւ Ալեքսանդրա Կոստենյուկը: Մրցաշարին հրավիրվել էր նաեւ աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը, սակայն նա նախընտրեց իր հայրենիքում մրցավեճի բռնվել շախմատիստների հետ:

Երեկ առաջնությունում կայացան մեկնարկային 3 տուրերի հանդիպումները: Հայաստանը ներկայացնող Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը հաղթանակով սկսեցին մրցաշարը: Էլինան սպիտակներով 47-րդ քայլին պարտության մատնեց Յիֆսին Դինգին, իսկ Լիլիթը 64-րդ քայլին սեւերով հաղթեց Նասյա Յանիգիավային:

Հաջորդ 2 տուրերում էլ Էլինա Դանիելյանի մրցակցուհիները չինացի շախմատիստուհիներն էին՝ Վանգ Յուեն եւ Քյուի Գուոն: Ցավոք Էլինան անհաջող անցկացրեց 2 պարտիաներն էլ ու պարտություններ կրեց: Իսկ ահա Լիլիթ Մկրտչյանը հաշտություն կնքեց աշխարհի նախկին չեմպիոնուհի, բուլղարուհի Անտուանետա Ստեֆանովայի և ռուսաստանցի Վալենտինա Գունինայի հետ: Այսպիսով, 3 տուրից հետո Լիլիթ Մկրտչյանը 2 միավորով 11-րդ տեղում է, Էլինա Դանիելյանը 1 միավորով հանգրվանել է 40-րդ հորիզոնականում:

100 տոկոսանոց արդյունքով մրցաշարային աղյուսակը գլխավորում են չինացի Քսյիան Հուանգը և շվեդ Պիա Կրամլինգը: Նրանցից կեսական միավորով հետ են մնում Համպի Կոներուն, Ալեքսանդրա Կոստենյուկը, Անտուանետա Ստեֆանովան և Նինո Խուրցիձեն: Այսօր կանցկացվի ևս 3 տուր:

# Գվարդիոլան կհանդիպի Աբրամովիչին

Անգլիական The Sun-ի տեղեկացմամբ «Չելսիի» ներկայացուցիչները հանդիպել են Խոսեպ Գվարդիոլայի հետ եւ նրան տարեկան 11 մլն ֆունտ ստեռլինգ աշխատավարձ են առաջարկել թիմը գլխավորելու համար: Ընդ որում Գվարդիոլային խոստացել են 2 տարի ժամանակ հատկացնել նոր թիմ կազմավորելու նպատակով:



Գվարդիոլան խնդրել է «Չելսիի» ներկայացուցիչներին հանդիպում կազմակերպել ակումբի սեփականատեր Ռոման Աբրամովիչի հետ:

Հիշեցնենք, որ «Բարսելոնից» հեռանալուց հետո Գվարդիոլան հայտարարել էր, որ չի պատրաստվում այլ թիմ մարզել եւ նվազագույնը մեկ տարի ցանկանում է հանգստանալ: Սակայն Ռոման Աբրամովիչը համառ է եւ ձգտում է ամեն գնով Գվարդիոլային հանձնել թիմի ղեկը:

# Միշել Տեր-Զաքարյանը գլխավորեց «Նանտը»

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նախկին պաշտպան Միշել Տեր-Զաքարյանը նշանակվել է ֆրանսիական «Նանտի» գլխավոր մարզիչ: Մինչ այդ հայ մասնագետը գլխավորում էր Ֆրանսիայի 2-րդ խմբում հանդես եկող «Կլերմոնը»:

Ժամանակին՝ 1980-88-ին Միշել Տեր-Զաքարյանը հանդես է եկել «Նանտում», իսկ 2007-08-ին մարզել է թիմը: «Նանտը» Ֆրանսիայի 2-րդ խմբի առաջնությունում 38 խաղում վաստակած 51 միավորով գրավել էր 9-րդ տեղը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Թուրքիայի դեսպանը հանդիպել է գերմանահայոց առաջնորդին, ոչ թե պոլսահայ համայնքին

Մայիսի 30-ին Բեռլինում Թուրքիայի դեսպան Հյուսեին Ավնի Կարսլիօղլուն այցելել է գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանին:

Օպերատիվ աշխատաոճով աչքի ընկնող թերթի հայկական կայքը լուրը տարածել է՝ հղում անելով թուրքական sondakika կայքէջի հաղորդագրությանը՝ նշելով, թե թուրք դեսպանը հանդիպել է Քյոլնի պոլսահայ համայնքին:

Այդպիսի համայնք Քյոլնում բնականաբար չկա: Միգուցե Քյոլնում ապրող պոլսահայերի՞ն... Ի պատասխան մեր հեռախոսային հարցման արքեպիսկոպոս **Բեկչյանն** ասաց, թե թուրք դեսպանը միայն իրեն է այցելության եկել՝ «առաջնորդը ճանաչելու նպատակով»: Առաջին անգամ է, որ Թուրքիայի դեսպանը այցելում է գերմանահայոց առաջնորդին, այդպիսի նախաձեռնությունն արքեպիսկոպոսին չի՞ զարմացրել՝ մեր հարցին ի պատասխան արքեպիսկոպոսն ասաց, թե «չի զարմացրել, քանի որ ինքը պատրիարքության թեկնածու է»: Ինչ վերաբերում է վերոնշյալ «պոլսահայ համայնքի հետ հանդիպմանը», այդպիսի բան իհարկե չկա, հանդիպմանը ներկա են եղել վարչության մի քանի անդամներ, պարզաբանեց գերմանահայոց առաջնորդը, որը «բարի օր» մաղթելով նպատակահարմար չնկատեց պատասխանել մեր հետագա հարցումներին:

Թուրքական կայքը իրազեկել էր, թե թուրք դեսպանը հայկական կոնյակ է խմել եւ հյուրասիրության մասնակցել, շրջել եկեղեցում: «Ինձ համար կարեւոր չէ՝ ինչ համայնք կլինի, ես հետաքրքրվում եմ Թուրքիայի բոլոր քաղաքացիներով: Մենք պետք է հասկանանք, որ աշխարհը փոխվել է: Անցյալում որոշ ցավեր են եղել, եւ բոլորս միմյանց ասելու բաներ ունենք, սակայն մենք պետք է նաեւ ապագային նայենք», ըստ թուրքական կայքի՝ ասել է դեսպան Կարսլիօղլուն: Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանն իր հերթին թուրք դեսպանին գոհունակություն է հայտնել Թուրքիայում հայկական եկեղեցիների վերադարձի մասին օրենքի առնչությամբ: Նա դեսպանին նաեւ Թուրքիայի հայերի մասին գիրք է նվիրել:

Թուրք դեսպանից այցի մանրամասները ճշտել չհաջողվեց երեկ: Բեռլինում Թուրքիայի դեսպանությունից խորհուրդ տվեցին կապվել Դյուսելդորֆի իրենց հյուպատոսարանի հետ: Այստեղ պատասխանող չեղավ: Մեր հեռախոսազանգը պատասխան գտավ Քյոլնում. Թուրքիայի հյուպատոսարանի աշխատակցուհին, որ առանձնակի հետաքրքրությամբ արձանագրեց մեր տվյալները, հաղորդեց, թե Քյոլնում գերմանահայոց առաջնորդարան դեսպանին ուղեկցել է նաեւ Դյուսելդորֆում Թուրքիայի գլխավոր հյուպատոսը, այլ մանրամասների, ասաց, տեղյակ չէ: Նա իրազեկեց, թե դեսպանը եւ հյուպատոսը գտնվում են Դյուսելդորֆի Լանդթագում՝ երկրամասային խորհրդարանում, կփորձի նրանց մեզ հետ կապել: Երեկ, ցավոք սրտի, չհաջողվեց պարզել թուրք դիվանագետների՝ հայկական կողմից, հայկական եկեղեցուց ստացած տպավորությունները:

Հավելենք մի ծանուցում՝ Թուրքիայի դեսպան Հյուսեին Ավնի Կարսլիօղլուն Բեռլինում պաշտոնավարում է 2012-ի հունվարի 15-ից: 2001-2004-ին նա Թուրքիայի գլխավոր հյուպատոսն է եղել Բաթումում, 2007-2008-ին՝ Թուրքիայի դեսպանը Բաքվում:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Մարմնակազմության դասեր՝ Իլհամ Ալիեւի աշխատակազմից

Ադրբեջանում, ըստ ամենայնի, իշխանությունները ցնցակաթվածի մեջ են: «Եվրոտեսիլ»-ը չափազանց թանկ նստեց նրանց վրա: Այնքան, որ չեն կարողանում ուշքի գալ: Ասվածը բոլորովին էլ չափազանցություն չէ: Երեկ Բաքվում գումարվել է «Ոչ կառավարական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության ձեւավորման գործում» անվանված խորհրդաժողով: Իշխող վարչախումբն այնտեղ ներկայացրել է նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական հարցերի վարչության պետ Ալի Հասանովը:

Ելույթում Հասանովը մեղադրանքներ է հնչեցրել միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների, անդրազգային լրատվամիջոցների, ադրբեջանական ընդդիմության եւ Իրանի «մոլլապետության» հասցեին: Դրանք որեւէ նոր շեշտադրում չեն պարունակել, ուստի անդրադարձի արժանի չեն: Փոխարենը Հասանովը փայլել է «մարմնակազմական գիտելիքներով»: Սույն պաշտոնյան բարոյականության դասեր է տվել ադրբեջանցի կանանց, թե «պիկետների ժամանակ տղամարդկանցից առաջ ընկնելու հարկ չկա, դա ադրբեջանական ժողովրդի ավանդույթներին հարիր չէ»:

Չբավարարվելով դրանով՝ Հասանովը ասել է. «Ամոթ էլ է դրանց կին ասել, նրանք նետվում են ոտքերի տակ, որպեսզի ոստիկանները ձեռք տան իրենց մարմնի ինտիմ տեղերին, իսկ հեռուստախցիկներն այդ ամենը նկարահանեն»: Իլհամ Ալիեւի աշխատակազմի ներկայացուցիչն, այսպիսով, անբարոյականության մեջ մեղադրել է ընդդիմության միջոցառումների մասնակից ադրբեջանցի կանանց:

Քաղաքակիրթ երկրում այդ մակարդակի պաշտոնյային անմիջապես կհեռացնեին իշխանությունից: Դահլիճը, մինչդեռ, Հասանովին ծափահարել է: Սա արդեն կատարյալ ողբերգություն է՝ երբ ոչ կառավարական կոչվող կազմակերպությունների խորհրդաժողովը ողջունում է բարձրաստիճան չինովնիկի ցինիզմը: Իշխող վարչախմբին, ամենայն հավանականությամբ, որեւէ այլ ռեսուրս, քան կանանց բարոյականության, ոստիկանությանը՝ «մարմնակազմության» դասեր տալն է, չի մնացել:

**Վ. Ա.**

## Ուժը կորցրած է ճանաչվել «ՖԱՍՏ-ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ գրավատան լիցենզիան

Կենտրոնական բանկի խորհուրդը մայիսի 29-ի թիվ 137 Ա որոշմամբ ուժը կորցրած (դադարեցված) է ճանաչել «ՖԱՍՏ-ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ՝ ՀՀ, ք. Երեւան, Էրեբունի վարչական շրջան, Էրեբունի հ. 16/1 եւ ՀՀ, ք. Երեւան, Արին Բերդի 5/7 հասցեներում գտնվող գրավատան կազմակերպման ԳԳ-Ե 202 լիցենզիայի (տրված՝ 2010 թվականի ապրիլի 27-ին) գործողությունը՝ գրավատան կազմակերպչի դիմումի համաձայն:

Սահմանվել է, որ որոշման ուժի մեջ մտնելու պահից գրավատունն իրավունք ունի կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերից բխող իրավունքների եւ պարտականությունների կատարման հետ:

«ՖԱՍՏ-ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ եւ ֆիզիկական անձանց միջեւ կնքված վարկային եւ պահատվության պայմանագրերը կարող են որոշման ուժի մեջ մտնելու պահից կողմերի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվել՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին մասի, վարկառուների կողմից վերցված վարկը եւ մինչեւ պայմանագրի լուծման պահը դրա դիմաց սահմանված տոկոսները եւ գումարի օգտագործման հետ կապված այլ վճարները մարելուց, պահատվության պայմանագրի դիմաց վճարումները կատարելուց, ներառյալ՝ գույքի պահատվության հետ կապված գրավատան կրած սովորական եւ արտակարգ ծախսերը հատուցելուց եւ գրավատան կողմից որպես գրավ կամ ի պահ ընդունված գույքը վերադարձնելուց հետո:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

***հեռ/ֆաքս. 56 37 61 էլ-փոստ. mcba@cba.am www.cba.am***

## Հայաստանի Հանրապետություն
## Գյուղատնտեսության նախարարություն
## «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
## Մրցակցային դրամաշնորհների մրցույթ

**ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագիրը, որի բաղադրիչներից է «Մրցակցային դրամաշնորհների ծրագիրը»: Բաղադրիչը իրականացվում է Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Ծրագրերի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով համաձայն գործող ընթացակարգի:**

**Նպատակը.** Մրցակցային դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում աջակցել նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների, մեխանիզմների ստեղծմանը եւ տարածմանը:

**Ընդունելի տեխնոլոգիաներ.** Ներկայացվող ծրագրային առաջարկները պետք է համապատասխանեն հետեւյալ չափորոշիչներին՝

◆ Գյուղատնտեսական ոլորտում արտադրվող արտադրանքի (գյուղմթերքի) որակի եւ որակական հատկությունների բարձրացում:

◆ Գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կատարելագործում՝ ներառյալ գյուղատնտեսական ապրանքների (մթերքների) արտադրության, վերամշակման, պահեստավորման նոր տեխնոլոգիաների ներդրում:

◆ Գյուղական բիզնեսի կառավարման բարելավում, կատարելագործում եւ բիզնեսի լավագույն փորձի զարգացում եւ տարածում:

◆ Գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացում, շուկայական կապերի ընդլայնում եւ ամրապնդում, ինչպես նաեւ գյուղ. մթերքների իրացման խնդիրների լուծում:

◆ ՀՀ տարածաշրջաններում կամ մարզերում գյուղատնտեսական արտադրանքի (մթերքի) նոր տեսակների եւ նոր տեխնոլոգիաների ներդրում, տարածում եւ զարգացում:

**Իրավասու հավակնորդներ.** Մրցակցային դրամաշնորհային ծրագրի մրցույթին կարող են մասնակցել՝

◆ Գյուղական ոլորտում գործող անհատ ձեռներեցներ, կոոպերատիվներ, ձեռնարկություններ (ՍՊԸ եւ այլն), միավորումներ (ասոցիացիաներ),

◆ Համայնքներում հիմնված ֆերմերային ֆորմալ եւ ոչ ֆորմալ (չգրանցված) գյուղական բիզնեսի խմբեր:

Ֆերմերային խմբերը պետք է բաղկացած լինեն առնվազն 5 հոգուց եւ ունենան տարբեր սեփական հողակտորներ (ֆերմերային խմբի անդամները չպետք է լինեն միեւնույն ընտանիքից, բայց կարող են լինել բարեկամներ): Խմբի անդամները պետք է լինեն նույն մարզից:

**Համագործակցություն.** Դրամաշնորհ ստանալու համար դիմորդները պարտավոր են համագործակցել որակավորված ծառայություն մատուցողների հետ: Ծառայություն մատուցողներից պահանջվում է ապահովել տեխնիկական աջակցություն առաջարկի նախապատրաստման եւ իրականացման գործընթացին:

Ծառայություն մատուցող կարող են լինել՝

◆ Մասնավոր խորհրդատվական համակարգի մասնագետներ

◆ Անկախ մասնագետներ եւ տեխնիկական փորձագետներ

◆ Հասարակական, հետազոտական եւ կրթական հաստատությունների մասնագետներ

◆ Հասարակական կազմակերպությունների, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական եւ մարզային կենտրոնների, Գիտասփյուռի, Ագրարային Համալսարանի մասնագետներ եւ փորձագետներ

◆ Երկրում գործող միջազգային այլ ծրագրերի փորձագետներ եւ մասնագետներ:

**Մասնակցության պայմանները.** Հավակնորդը (դիմորդը) ծառայություն մատուցողի եւ այլ մասնակիցների հետ միասին պետք է ներդնի ծրագրով պահանջվող դրամաշնորհի ընդհանուր արժեքի նվազագույնը 30 տոկոսը, կանխիկ գումարային տեսքով:

Որպես այլ մասնակցի պարտականություն, տարբեր գործընկերների մասնակցությունը եւ ներդրումը պետք է հաստատվի գրավոր համաձայնագրով, կնքված հիմնական հավակնորդի, ծառայություն մատուցողի եւ այլ մասնակցի միջեւ:

Բացի ֆինանսական ներդրումից հավակնորդները կարող են կատարել ներդրումներ նաեւ բնամթերային տեսքով (շենք, շինություն, հող, աշխատուժ, հումք, գյուղ. մեքենաներ, սարքավորումներ, անասուններ, ծառայություններ եւ այլն), որոնք ուղղակիորեն կապված են դրամաշնորհային ծրագրի հետ:

**Ներկայացվող պահանջները.** Հավակնորդի (դիմորդի) կողմից ներկայացված հայտը պետք է բավարարի հետեւյալ պահանջներին՝

◆ Առաջարկվող ծրագրի տեւողությունը չպետք է գերազանցի 24 ամիսը,

◆ Ծրագրի համար պահանջվող դրամաշնորհի գումարը պետք է լինի նվազագույնը 8,000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը 20,000 ԱՄՆ դոլար,

◆ Հայտով պահանջվող դրամաշնորհը պետք է ուղեկցվի նշված դրամաշնորհի գումարի առնվազն 30%-ի չափով կանխիկ համաֆինանսավորմամբ,

◆ Ընդհանուր ծրագրի արժեքը չպետք է գերազանցի 60,000 ԱՄՆ դոլարը,

◆ Դիմորդը չի կարող ստանալ մեկ անգամից ավել դրամաշնորհ,

◆ Դրամաշնորհ չի հատկացվի այն հավակնորդներին, որոնք անհաջողության են մատնել, կամ նախկինում ձախողել են որեւիցե դրամաշնորհային ծրագիր:

**Դիմումների ընդունումը եւ գնահատումը.** Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) հայտերը եւ նրանց կից պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացնեն «Գյուղատնտեսական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային Դրամաշնորհային Ծրագրերի քարտուղարություն մինչեւ 2012 թ. հուլիսի 10, ժամը 16:00:

Վերջնաժամկետից հետո ներկայացված դիմումները չեն քննարկվի: Հայտերը պետք է ներկայացվեն փակ ծրարներով չորս օրինակից՝ մեկը բնագիր, երեքը կրկնօրինակներ:

**Ծանուցում՝** ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտատուները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտատուներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակը:

Դրամաշնորհների հատկացման եւ հայտերի պատրաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթանալու նպատակով «Գյուղատնտեսական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային Դրամաշնորհային Ծրագրերի քարտուղարության աշխատակազմը գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների հետ համատեղ յուրաքանչյուր մարզում կկազմակերպեն հանդիպումներ հայտատուների (դիմորդների) հետ, ըստ ստորեւ բերված ժամանակացույցի:

◆ **ՀՀ Շիրակի մարզում**, 2012 թ. հունիսի 4-ին, ժամը 11:00:
ք. Ախուրյան, Ախուրյանի գյուղապետարանի շենք, Գյումրու խճուղի - 42 շենք, 3-րդ հարկ

◆ **ՀՀ Լոռու մարզում**, 2012 թ. հունիսի 4-ին, ժամը 15:00:
ք. Ստեփանավան... 

◆ **ՀՀ Տավուշի մարզում**, 2012 թ. հունիսի 5-ին, ժամը 11:30:
ք. Իջեւան, մարզպետարանի շենք, Սահմանադրության փող. 1 շենք

◆ **ՀՀ Գեղարքունիքի մարզում**, 2012 թ. հունիսի 5-ին, ժամը 15:00:
ք. Գավառ, մարզպետարանի շենք, Գրիգոր Լուսավորիչի 36 շենք

◆ **ՀՀ Սյունիքի մարզում**, 2012 թ. հունիսի 6-ին, ժամը 13:00:
ք. Գորիս, ՀՀ Սյունիքի մարզպետարանի Գորիսի ներկայացուցչություն (նախկին գործկոմի), Մաշտոցի 3 շենք

◆ **ՀՀ Վայոց Ձորի մարզում**, 2012 թ. հունիսի 6-ին, ժամը 16:30:
ք. Եղեգնաձոր, մարզպետարանի շենք, Շահումյան 5

◆ **ՀՀ Արարատի մարզում**, 2012 թ. հունիսի 7-ին, ժամը 11:00:
ք. Արտաշատ, մարզպետարանի շենք, Օգոստոսի 23 փողոց, 60 շենք

◆ **ՀՀ Կոտայքի մարզում**, 2012 թ. հունիսի 7-ին, ժամը 15:00:
ք. Աբովյան, Նոր-Գյուղ, 1-ին փողոց, 4-րդ հասցե (Աբովյան քաղաքի անասնաբուժարանի շենք)

◆ **ՀՀ Արագածոտնի մարզում**, 2012 թ. հունիսի 8-ին, ժամը 11:00:
ք. Աշտարակ, մարզպետարանի շենք, Վարդգես Պետրոսյանի փողոց, 4 շենք

◆ **ՀՀ Արմավիրի մարզում**, 2012 թ. հունիսի 8-ին, ժամը 14:00:
ք. Արմավիր, մարզպետարանի շենք, Աբովյան 71

Փաստաթղթերի ներկայացնելու վերաբերյալ տեղեկություններ

Հայտերի պաշտոնական ձեւակարգերը եւ հայտերի լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ

◆ Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոններից

◆ «ԳԾԻԳ» ՊՀ
էլ. փոստ-info@arspiu.com
Կայք -www.arspiu.com
Հեռ - 29-73-01; 29-73-02; 29-73-03

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 31.5.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: